Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

36(358)
31.12.2013
Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

## ԱՄԱՆՈՐԻ ԼՈՒՅՍԵՐԻ ՀՐՃՎԱՆՔ՝ ՁԵՐ ՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Բնավ չնսեմացնելով մեր տոնացույցում նշվող մյուս տոները, շեշտենք՝ այդ ցանկում Ամանորը մնում է որպես ամենատպավորիչ տոնը: Իսկ հիմնապատճառները տարբեր են. մեկի համար Նոր տարին հույսերի մեկնարկ է, մյուսը պարզապես առիթ է փնտրում բարեկամների ու մտերիմների հետ սրտանց ուրախանալու համար, երրորդը ծննդյան տոների մեջ իր մանկությունն է գտնում… Իսկ համընդունելին այն է, որ տարեմուտը մի հոգեբանական սահմանագիծ է, որտեղ հասցեավորվում են մեր թաքուն երազանքները: Դրանք իրականացված տեսնելու երջանիկ հույսով էլ մենք ապրում ենք հետագա 365 օրերին:

Կա ճոխ բառապաշար ամանորյա բարեմաղթանքների համար, և չենք զլանում դրանցից ընտրել լավագույն բառերը, որպեսզի առիթական հղենք մեր մտերիմներին: Ինչպես ասում են՝ նման պահերին շռայլորեն ի հայտ է գալիս ստեղծագործական վառ երևակայությունը: Եվ որ ամենակարևորն է՝ այդ մաղթանքները սրտից են բխում, նախապաշարվածության զուսպ անկեղծությամբ ու պատասխանատվությամբ:

Բայց սա ընդամենը Ծննդյան տոներին առնչվող զգայական բաղկացուցիչն է, կա նաև մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր բաղադրիչ: Խոսքը վերաբերում է տոներին պատշաճ կերպով նախապատրաստվելուն: Թե որն է պատշաճը՝ անհատական ընկալման ու կարողությունների հարց է: Ստույգ ոչ ոք չի հաշվել, սակայն շրջանառվող տեսակետով՝ նոր տարվա միջին կարգի սեղանի համար պահանջվում է 150-200 հազար դրամ: Դա նշանակում է, որ մանկավարժի մեկ ամսվա աշխատավարձը բավարար չէ միջին կարգի տոնական սեղան պատրաստելու համար: Դեռ չենք խոսում այն մասին, որ նույն այդ մանկավարժը, եթե եկամտի այլ աղբյուր չունի, ստիպված է լինելու մեկ ամիս իրեն զրկել անհրաժեշտ շատ բաներից:

Իսկ ինչո՞ւ... Երևի այս հարցը հնչեցրեց ձեզանից յուրաքանչյուրը: Իսկապես, պե՞տք է մեզ ճոխ, տարբեր մսամթերքներով ու թանկարժեք ալկոհոլային խմիչքներով ծանրաբեռնված սեղանը: Տոնական ուտեստը պիտի նաև խորհուրդ պարունակի, հատկապես Ամանորի հետ կապված:

Հատկանշական է, որ ուրիշ ազգեր համեմատաբար համեստ սեղան են պատրաստում Նոր տարվա համար: Եվրոպայում տարածված է եփած հնդկահավը, որոշ դեպքերում՝ սագի կամ բադի եփած միսը, որը մատուցվում է մրգերի ու քաղցրեղենի հետ: Խոզի և տավարի մսով պատրաստված կերակուրները խիստ հազվադեպ կիրառում ունեն եվրոպացիների տոնական ճաշացուցակում:

Ավստրիայում, Հունգարիայում և Հարավսլավիայում սեղանին միս և նամանավանդ՝ թռչնամիս, չեն դնում: Դրա մեջ այն խորհուրդը կա, որ եթե հնդկահավի կամ բադի միս ուտեն, ապա երջանկությունը կթռչի ու կլքի իրենց:

Խաղողն ու ընդեղենը իտալացիների համար առողջության և բարեկեցության խորհրդանիշն են, իսկ ահա նույնպես տաքարյուն իսպանացիներն ու պորտուգալացիները նոր տարեսահմանին, ժամացույցի հանդիսավոր զարկերի ուղեկցությամբ, 12 հատ խաղողի հատիկ են ուտում՝ մտքում 12 երազանք պահելով:

Ծիսական դարձած այսպիսի ավանդույթները, սակայն, բնորոշ են ոչ միայն Եվրոպային: Տիբեթում, օրինակ, կարկանդակներ են թխում ու բաժանում ծանոթ-անծանոթներին: Դրա ամբողջ իմաստն այն է, որ ինչքան շատ բաժանեն, այնքան ավելի բարեկեցիկ կապրեն գալիք տարում:

Մեր պարագայում խնդիրը միայն առկա նյութական հնարավորությունների մեջ չէ, թեպետ հենց դա է մեր աչքին հառնում, երբ սկսում ենք պատրաստվել Ամանորին: Տոնական ոչ աշխատանքային օրերին, ֆիզիկական նվազ ծանրաբեռնվածության պայմաններում, վիտամինների, սպիտակուցների ու ածխաջրերի գերհագեցումով սնվելը բացասական է ազդում մեր առողջության վրա: Դա քաջ իմանալով, հայի (արցախցու) համառությամբ նույնը կրկնում ենք ամեն տարի: Խոստովանենք, այս օրերին դարձյալ ամեն մեկս մտել ենք տոնական մրցավազքի մեջ: Հնարավոր չէ՞, ինչ է, ձերբազատվել այս տխուր ավանդույթից… Սովորաբար ասում են՝ տարին ինչպես սկսես, այնպես էլ կլինի տարվա ընթացքում: Եթե դա իրոք այդպես է, ապա թեկուզև հանուն սեփական գրպանի ու առողջության՝ հարկավոր է առավել խնայողական լինել:

Մեր այս պատգամը որպես մաղթանք հղելով, նաև մաղթում ենք Ամանորի լույսերի հրճվանք ձեր օջախներում: Թող 2014 թվականին հաջողությունն ուղեկցի ձեր բոլոր նախաձեռնություններին:

Երջանիկ Ամանոր և Սուրբ Ծնունդ:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

## ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻ ԱՌԹԻՎ

Հարգելի գործընկերներ
Սիրելի աշակերտներ և ուսանողներ

Ահա և պատմության գիրկն է անցնում 2013 թվականը: Ուզում եմ հավատալ, որ անցնող տարին բոլորիդ համար էլ եղել է սպասումների արդարացման տարի, և ձեր երազանքներին ընդառաջ եկող 2014 թվականը դարձյալ հաջողություններ է բերելու ձեր նախաձեռնություններին:

Բարեմաղթանքի խոսքեր հղելու այս հրաշալի առիթն օգտագործելով, ուզում եմ հավատացնել, որ ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը եկող տարում ևս ջանք չի խնայի կրթության բոլոր աստիճաններում բարելավելու ուսման որակը, ապահովելու այն բավարար պայմանները, որոնք հիմք կհանդիսանան արդյունավետ աշխատանքի համար: Բնագավառում առկա խնդիրները լուծելու համար մենք իիրավի՛ ունենք անհրաժեշտ ներուժ ու նախադրյալներ, և դրանք կյանքի կկոչենք մեր նվիրյալ ջանքերի համատեղմամբ: Դա նաև ժամանակի հրամայականն է:

Մեզ մնում է լավատեսորեն համակվել վաղվա օրվա հանդեպ, որպիսին հուշում և տրամադրում է Ամանորը: Համոզված եմ, բոլորիդ սրտերում բազում գեղեցիկ մաղթանքներ կան առ ձեր հարազատները, ընկերներն ու ծանոթները: Սրտանց միանում եմ այդ մաղթանքներին՝ դրանք հասցեագրելով ձեր սրտերում տեղ գտած թանկ ու հարազատ մարդկանց:

Թող գալիք Նոր տարին խինդ և ցնծություն բերի յուրաքանչյուրիդ, թող միշտ սերն ու խաղաղությունը թևածեն ձեր օջախներում և Արցախ աշխարհում:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

**ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆ**
**ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**



<u>*Պարույր Սևակ*</u>

## ԴԻՄՈՒՄ ԵՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՊԵՍ

*Դո՛ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար պահանջով,*
*Իբրև պատասխան նրանց սրսըփուն ակնկալիքի.*
*Դո՛ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողդոջուն կանչով,*
*Իբրև պատասխան նրանց կարիքի.*
*Դո՛ւ, որ ոտներըդ խճողել ես դեռ անցյալի ցանցով,*
*Մինչդեռ ձեռքերըդ մեկնել ես արդեն կանչող գալիքին,-*
*Արի՛, Նո՛ր Տարի,*
*Գալուստըդ բարի՛:*

*Արի՛, Նո՛ր Տարի,*
*Բայց... այնպե՛ս արի,*
*Որ ատոմական այս ահեղ դարի*
*Գոռ ժամացույցը ինքն իրեն լարի*
*Մայրացած հարսի սրտատըրոփի համաչափությամբ,*
*Եվ նրա անտես սլաքները զույգ*
*Իրենց վիրավոր թևաթափությամբ*
*Ոչ թե մեզ կրկին*
*Քարանձավների անաչ խոռոչը մատնացույց անեն,*
*Այլ Տիեզերքի անկոխ դաշտերին*
*Մեր զույգ աչքերի հայացքը տանեն...*

## ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՄԲ ՏԱՐԵՑՏԱՐԻ ԱՌԱՋ ԳՆԱՆՔ

### *Հարցազրույց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի հետ*



*- Պարոն Ասրյան, կրթական ոլորտում տարին սովորաբար եզրափակում են ուսումնական տարեշրջանի կտրվածքով: Այդուհանդերձ, եթե ընդհանուր շտրիխներով գնահատելու լինեք՝ ինչպիսի՞ն էր անցնող տարին համակարգի համար:*

- 2013 թվականը նախարարության և ամբողջ կրթության ոլորտի համար ծանրաբեռնված տարի էր: Այն առումով, որ նախարարության աշխատանքային պլանով նախատեսված էին բազմաթիվ միջոցառումներ, որոնց անկյունաքարը կրթության որակի ապահովման խնդրի իրականացումն էր կրթության բոլոր աստիճաններում: Այս ուղղությամբ բավականին աշխատանքներ ենք կատարել: Իհարկե, կառուցվածքային առումով ոլորտը փոփոխության չի ենթարկվել: Հիմնականում պահպանվել են բոլոր տիպի հանրակրթական, միջին մասնագիտական և արհեստագործական ու բարձրագույն ուսումնական հաստատությունները: Ներկա դրությամբ գործում են 216 դպրոցներ, սովորում շուրջ 21400 աշակերտներ: Անցած տարվա համեմատությամբ 162 աշակերտով սովորողների թիվն ավելացել է: Սա գոհացուցիչ է այն առումով, որ եթե վերջին տարիներին նվազում էր նկատվում, այս տարի արդեն աճ արձանագրեցինք: Բոլոր ոլորտներում նույն քանակությունը պահպանվել է: Արհեստագործականում այն մի քիչ նվազել է: Բուհական համակարգում ընդունելությունը համաչափորեն կազմակերպվել է, և իրականացվել են բոլոր այն խնդիրները, որոնք նախատեսված էին:

Մեր տեսադաշտում առաջինը՝ որպես գերակա ոլորտ, եղել է հանրակրթությունը: Այստեղ և՛ տեսչական ստուգումները, և՛ արտաքին ընթացիկ գնահատումը, և՛ միասնական, ավարտական պետական քննությունները որոշակի արդյունքներ են տրամադրել՝ պատկերացում կազմելու, թե ինչպիսին է ուսումնական գործընթացը մեր կրթօջախներում: Եթե ասենք, հանրակրթության ոլորտում համապատասխան որակ և 100 տոկոսյա առաջադիմություն ապահովվում է, թերևս, ճիշտ չէր լինի: Ուսումնական գործընթացն այնպիսին է, որ կախված է և՛ երեխաների մտավոր զարգացածության, և՛ մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման պատրաստվածության աստիճանից, դպրոցների նյութատեխնիկական ապահովվածությունից, իհարկե, նաև ծնողական հասարակությունից և ընդհանրապես, հասարակության՝ կրթության նկատմամբ վերաբերմունքից: Բայց կարող եմ ասել, որ այս բոլոր օղակներն էլ 2013-ին գործել են, և մենք որոշակի հաջողությունների ենք հասել: Բերեմ մի քանի տվյալներ: Կրթության որակի դրսևորման մի յուրահատուկ ձև են առարկայական օլիմպիադայի արդյունքները: Անցած տարի 13 առարկաներից կազմակերպված օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցել են 337 աշակերտներ, որոնցից 51-ը ճանաչվել են հաղթող և պարգևատրվել նախարարության դիպլոմներով, դրամական խրախուսանքով: Պարգևատրվել են նաև 21 ուսուցիչներ, որոնց աշակերտները զբաղեցրել են մրցանակային տեղեր: Ուրախալին այն է, որ աշակերտներից 49-ը մասնակցել է օլիմպիադայի ՀՀ եզրափակիչ փուլին՝ 12 թիմերի կազմում, 32 հոգի գրավել են մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր և արժանացել դիպլոմների: Այս աշակերտներին ընդունել է ԼՂՀ նախագահը և պարգևատրել արժեքավոր նվերներով, ինչպես նաև խրախուսել 1-ին տեղեր գրաված աշակերտների ուսուցիչներին: 1805 հոգի մասնակցել են «Կենգուրու» մաթեմատիկական խաղ-մրցույթին և 46 հոգի արժանացել հատուկ, 5 հոգի՝ լավագույն մրցանակների: Ռուսաց լեզվի իմացության ստուգման գծով անցկացված «Ռուսական արջուկ» մրցույթի մասնակիցներից 10 հոգի արժանացել են հատուկ մրցանակի, 4-ը՝ լավագույն: Թվում է, ցուցանիշները վատ չեն: Նույն կարգով կարող ենք վերլուծության ենթարկել ընթացիկ ստուգման արդյունքները: 1451 դասարաններում տրվել են ընթացիկ ստուգման առաջադրանքներ: Մասնակցել են 10553 սովորողներ, 10-բալանոց սանդղակով 0-3 միավոր ստացել է 1729 աշակերտ (26%), 4-6 միավոր՝ 5018 (48%), 7-8 միավոր՝ 2405 (25%) և 9-10 միավոր՝ 401 (4%) աշակերտ: Ինչպես տեսնում եք, արդյունքները բավարար են, բայց 4% կազմող 9 և 10 միավոր ստացողների քանակը մեզ չի գոհացնում:

Միասնական քննությունների առաջին փուլում հայտագրվել է 889, կենտրոնացված քննություններին՝ 85 դիմորդ, լրացուցիչ փուլին՝ 52, կենտրոնացվածին՝ 12 դիմորդ: 2154 գրավոր աշխատանքներից 20-բալանոց սանդղակով գնահատվել են. 0-7,25 միավոր (31%), 7,5-13,25 (46%), 13,5-17,25 (14%), 17,5-20 (8%):

☞ 2

## ԱՄՓՈՓՈՒՄ

# ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՄԲ ՏԱՐԵՑՏԱՐԻ ԱՌԱՋ ԳՆԱՆՔ

1 ☜ Եթե համեմատում ենք 2012-ի արդյունքների հետ, «անբավարար»-ների քանակը նվազել է 2%-ով, «բավարար»-ներինը՝ 7%-ով, «գերազանց»-ների քանակն աճել է 5%-ով: Մեզ գոհացնում է այն հանգամանքը, որ «գերազանց»-ների թիվն աճել է:

Տարվա ընթացքում սովորողները մասնակցել են տարբեր մրցույթների՝ «Հայ ասպետ», Համահայկական օլիմպիադա և այլն և արժանացել պարգևների: Սակայն այս արդյունքները դեռ չեն գոհացնում, քանի որ կրթական բարեփոխումների հիմքում դրված է ուսման որակի բարձրացումը, ու մենք դեռ անելիքներ ունենք: Իսկ անելիքների հիմնական մասը կապված է նաև ուսուցչական համակազմի վերապատրաստման հետ: 2013թ. 848 ուսուցիչներ վերապատրաստվել և ատեստավորվել են, 63-ը վերապատրաստվել են ՆՈՒՌ ծրագրի շրջանակներում (հիմնականում ընդգրկվել են շրջկենտրոնների դպրոցների դասվարները և ինֆորմատիկայի ուսուցիչները), 168 ուսուցիչներ վերապատրաստվել են շախմատ առարկայի գծով, 35-ը՝ որպես մանկապարտեզների և նախադպրոցական խմբերի դաստիարակներ և ղեկավարներ: Վերապատրաստումները տալիս են իրենց արդյունքը. անկասկած, յուրաքանչյուր ուսուցիչ պետք է նպատակադրվի վերապատրաստումից հետո ավելի լավ աշխատել և տալ գոհացուցիչ արդյունքներ:

Հանրակրթության ոլորտը պետության ուշադրության կենտրոնում է, տարեցտարի բարելավվում են պայմանները: Անցած տարի շահագործման հանձնվեցին 3 նոր դպրոցներ՝ Ստեփանակերտի հ. 6, Հովսեփավանի, Մարտունու հ. 1: Նաև 3 մանկապարտեզների շենքեր են կառուցվել՝ Սոս, Դրախտիկ, Մոշաթաղ համայնքներում: 2014թ. շինարարական աշխատանքները շարունակվելու են 17 կրթօջախներում, որոնցից 6-ը նոր կառուցվող, 3-ը՝ վերակառուցվող դպրոցներ են, 6 նոր մանկապարտեզներ և Շուշիում՝ Հայաստանի ագրարային համալսարանի մասնաշենքն ու արհեստագործական ուսումնարանը:

Ինչպես ասացի, արհեստագործական ուսումնարան ընդունվողների թիվը որոշ չափով նվազել է, իսկ միջին մասնագիտական հաստատություններում սովորողների որոշակի աճ է նկատվել: Դա պայմանավորված է նրանով, որ ավագ դպրոց են ընդունվել այն աշակերտները, որոնք մտադրված են հետագայում բուհ ընդունվել, իսկ մի մասն էլ նախընտրել է կրտսեր մասնագետի և արհեստավորի մասնագիտությունը և ընդգրկվել այս հաստատություններում:

Ընդհանրապես, 9-րդ դասարանն ավարտած քիչ թվով սովորողներ ունենք, որոնք որ ոչ մի ուսումնական հաստատությունում չեն ընդգրկվում: Դա օրինաչափ է:

Որոշակի աշխատանք ենք տարել նաև ներառական կրթության ուղղությամբ: Ամեն տարի նման կարիք ունեցող երեխաների գնահատումն իրականացվում է ՀՀ բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի կողմից, բայց այս տարի ԳԹԿ կառույցում ստեղծել ենք կարիքի գնահատման բաժին, որն էլ այդ աշխատանքներն իրականացրել է, և այս ուսումնականում շուրջ 200 աշակերտ ընդգրկվել է ներառական կրթության բաժնում, 98 հոգի՝ տնային ուսուցման համակարգում:

Արհեստագործական կրթության գծով մասնագիտությունների հստակեցում ենք կատարել, տեղերը և մասնագիտությունների ցանկը պակասեցրել ենք, թողել ենք այնպիսիները, որոնց պահանջարկը կա: Որոշակի բարելավման աշխատանքներ ենք տարել Մարտունու արհեստագործական ուսումնարանում, Շուշիի արհեստագործականում շինարարական գծով մասնագիտություններ կբացվեն, և այն կլինի բարձրակարգ ուսումնարան ֆրանսիական մոդելով՝ բոլոր պայմաններով, նաև՝ հանրակացարանով: Եվ այնտեղ կարող են լիարժեք արհեստավորներ պատրաստվել:

Մասնագիտական կրթության ոլորտում հիմնականում պահպանվել են գործող քոլեջները: Կտրուկ որակական փոփոխություններ այս օղակում դեռևս չունենք: Երաժշտական քոլեջի համար նոր շենք է կառուցվում, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի այս ոլորտի հետագա զարգացման համար: Շուշիի հումանիտար քոլեջը տեղափոխվել է Մուրացանի անվան դպրոցի շենքը, այստեղ էլ բոլոր պայմանները կստեղծենք, որ քոլեջը կարողանա ծավալել իր գործունեությունը: Բժշկական ու պարարվեստի քոլեջները թեպետ մեր ենթակայության տակ չեն, բայց համապատասխան մեթոդական օգնություն են մեզնից ստանում: Կարելի է ասել, որ այս օղակը ևս գործում է բավարար կերպով:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում որոշ փոփոխություններ ենք կատարել. վերանայել ենք մասնագիտությունների ցանկը՝ հիմնականում թողնելով նրանք, որոնց պահանջարկը կա: Հասկանալի է, այստեղ պահանջը նույնն է լինելու, ընդունվելու են միայն միասնական քննությունների արդյունքներով, իսկ դրանք ցույց են տալիս, որ միայն գիտելիք ունեցող աշակերտներն են կարողանում դրական միավոր վաստակել: Դրանով հանդերձ, մենք չենք կարողանում համալրել որոշ մասնագիտություններ: Բայց գոնե եղածներն իրենց գիտելիքների պաշարով բավարարում են, որ սովորողներն ստանան բուհական կրթություն:

Մենք անելիքներ ունենք այս համակարգում: Ինչպես գիտեք, կրեդիտային համակարգը ներդրված է բոլոր բուհերում, և դրա աստիճանական իրականացմանն ենք հետամուտ: Մենք պահանջում ենք, որ բուհերում նույնպես ուսուցման որակն ապահովվի, բազմաթիվ ստուգումներ են իրականացվում և՛ հաճախումների առումով և թե՝ տվյալ բուհի դասախոսական կազմի կողմից ինչքանով են արդյունավետ օգտագործվում ուսուցման ժամանակակից մեթոդները: Կարևոր խնդիր ենք համարում ընթացիկ քննությունները ևս կազմակերպել այնպես, որ սուբյեկտիվ գործոնը դեր չխաղա, ինչ-որ չափով դա հաջողվում է, բայց այս ուղղությամբ էլ դեռ անելիքներ ունենք: Գիտեք, որ պետական համալսարանում անցած տարի առաջին կուրսերի համար բոլոր քննությունները կազմակերպվել էին թեստային համակարգով, բայց որոշակի դժվարություններ են առաջացել՝ կապված այն բանի հետ, որ ոչ բոլոր դասախոսներն են կարողանում բովանդակալից թեստեր կազմել: Ինչ-որ տեղ գերակշռել են ոչ թե բացասական, այլ ավելի բարձր գնահատականները, ինչն այնքան էլ համոզիչ չէ: Եվ համալսարանը որոշել է կիսամյակային քննություններն անցկացնել ավանդական ձևով՝ զուգահեռ օգտագործելով նաև թեստային մեթոդը: Կարծում ենք, առաջիկա տարիներին այս հարցը նույնպես իր լուծումը կստանա: Եվ այս օղակում կոռուպցիոն ռիսկերը կհասցվեն նվազագույնի: Իհարկե, մեր բուհերում նույնպես կան մասնագիտական համալրման խնդիրներ: Ոչ բոլոր մասնագիտությունների գծով է, որ ունենք որակյալ մասնագետներ: Եվ յուրաքանչյուրը մագիստրատուրայի և ասպիրանտուրայի միջոցով պետք է կարողանա առաջիկա տարիներին համալրել մասնագետների պակասը: Իհարկե, որակյալ մասնագետների պատրաստման գծով դրական ներգործություն ունի մեր երկու՝ ԼՂՀ և ՀՀ կառավարությունների համագործակցության ծրագրով նախատեսված տարեկան 60 բակալավրի և 30 մագիստրոսական ու 5 ասպիրանտական անվճար տեղերի ընդունելության կազմակերպումը: Ասեմ, որ վերջին տարիներին բակալավրի և մագիստրոսի տեղերը պարզապես չեն բավականացնում, ու նաև որոշակի թվով ուսանողների ուսման վճարի փոխհատուցումը կառավարությունը վերցնում է իր վրա. 1-ին և 2-րդ կուրսերում նման կարգի 34 սովորող ունենք: Ուսման վարձի փոխհատուցման համակարգ գործում է նաև օրենքով սահմանված կարգով. զոհված զինծառայողների, երկկողմանի ծնողազուրկ և հաշմանդամ երեխաներն ընդունվում են անվճար համակարգ: Բուհերն էլ իրենց հերթին մասնակի զեղչեր են կատարում սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների նկատմամբ: Մի խոսքով, պետությունը գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի ինչ-որ տեղ ուսանողների բեռն ուսման վճարի տեսակետից թեթևացրած լինի, և նրանք կարողանան լիարժեք կրթություն ստանալ:

*- Այնուամենայնիվ, ո՞րն եք համարում 2013-ի ամենամեծ նվաճումը Արցախի գիտակրթական բնագավառում:*

- Կրթության ոլորտում բոլոր պահանջներն էլ կարևոր են: Բայց ես կասեի, որ 2013-ի ամենակարևոր խնդիրը, որ իրականացրել ենք, Ստեփանակերտ քաղաքի նախադպրոցական հաստատությունների բեռն ինչ-որ չափով թեթևացնելն էր: Տասը դպրոցում ստեղծվեցին համապատասխան պայմաններ. երեք դպրոցներում՝ հ. 2, 9, 10, լիարժեք մանկապարտեզային հարմարություններ՝ 9-ժամյա տևողությամբ, քնելու, սնվելու ռեժիմով, ութ նման կարգի խումբ՝ 5-6 տարեկան երեխաներ, դաստիարակվում ու կրթվում են այդ դպրոցներում: Մնացածներում 6-ժամյա տևողությամբ նախադպրոցական խմբեր են, որոնցում մեկանգամյա սնունդ է տրվում: Ունենք նման 27 խումբ: 23-ն էլ գործում են շրջաններում: Իհարկե, այնտեղ նման պայմաններ չկան, երեխաները թեթևացրած ռեժիմով ստանում են նախադպրոցական կրթություն:

Նաև ասեմ, որ մանկապարտեզների ցանցն անընդհատ ընդլայնվում է, այսօրվա դրությամբ ունենք 43 մանկապարտեզ, որից 29-ը պետական է, 6 մանկապարտեզ էլ եկող տարվա ընթացքում պետք է շահագործման հանձնվի: Պարզ է, որ այս հարցը՝ որպես գերակայություն, տարեկան անընդհատ աճ կունենա: Եվ հասկանալի է, որ երբ հ. 6 դպրոցը տեղափոխվի նոր շենք, այն տրամադրվի մանկապարտեզին, ինչպես նաև 11-րդ դպրոցի նախկին շենքը որպես մանկապարտեզ վերակառուցվելուց հետո առաջիկա 1-2 տարվա ընթացքում մայրաքաղաքում նախադպրոցական տարիքի երեխաների խնդիրը կլուծվի:

*- 2014-ի համար որևէ նշանաբան ունե՞ք:*

- Ընդհանրապես, մեր գլխավոր նպատակն այն է, որ ուսման որակի առումով տարեցտարի առաջ գնանք: Սա մեր գերակա խնդիրն է: Մեր ամբողջ գործունեությունը խարսխված է այս նպատակի վրա: Բարեփոխումները տևական և շարունակական գործընթաց են: 2018-ին կավարտենք բարեփոխումների առաջին շրջափուլը. կունենանք առաջին շրջանավարտները, որոնք 6 տարեկանից են մտել դպրոց ու հիմնականում նոր ծրագրերով են սովորել: Եվ ամեն տարվա համար հարկ չէ նշանաբան ընդունել: Բոլոր դեպքերում հիմնական նպատակը ուսման որակի բարձրացումն է:

*- Ուսուցիչների աշխատավարձի բարձրացում կլինի՞ 2014-ին:*

- Պետական ծրագրով նախատեսված է, որ և՛ պետական ծառայողների, և՛ մանկավարժների աշխատավարձերը բարձրացվեն, որը կլինի 2014թ. հուլիսի 1-ից:

Ինչպես որ պետական պաշտոնյաների համար օրենքով նախատեսում են վարձատրության ձևեր, այնպես էլ նման կարգի ձևեր կմշակվեն ուսուցիչների համար: Եվ ընթացքում կիմանանք, թե ինչ տոկոսաչափով է բարձրանալու ուսուցիչների աշխատավարձը:

*- Անշուշտ, Դուք կրթական բնագավառի նվիրյալն եք, բայց կան նաև անձնական հոգսեր: Այս առումով ի՞նչ ակնկալիքներ ունեք նոր տարուց:*

- Հասկանալի է, որ յուրաքանչյուր ոք անձնական երազանքներ ունի: Եթե ստեղծել ես ընտանիք, որի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն ունի նրա նկատմամբ, հեշտ են լուծվում հոգսերը: Ընտանեկան հավաքույթներում մաղթում եմ բոլորի ցանկությունների իրականացում: Յուրաքանչյուր ծնող իր զավակների, թոռների հաջողությունը, երջանկությունն է ցանկանում: Իսկ ընդհանրապես, անձնական և հասարակական կյանքը մեկը մյուսով է պայմանավորված, և մեկի հաջողությունը մյուսինն է:

Ես կասեի, ժամանակի մեծ մասն անց եմ կացնում այստեղ՝ նախարարությունում, որը մեծ կառույց է, ունի շատ հոգսեր և այնպիսի մի ոլորտ է, որը բոլորի ուշադրության կենտրոնում է: Ջգտում ենք այնպես անել, որ արատավոր երևույթ, ինչ-որ վատ բան չկատարվի: Նույն կերպ էլ կշարունակենք 2014 թվականին:

*- Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ ի՞նչ կմաղթեիք կրթության բնագավառի աշխատողներին:*

- Որպես ոլորտի պատասխանատու՝ կցանկանայի, որ 2014 թվականին ավելի շատ հաջողություններ լինեն, ավելի շատ երեխաներ՝ դպրոցում: Երեխաների թվակազմը միշտ էլ ցուցանիշ է տվյալ երկրամասի, տարածաշրջանի ազգաբնակչության աճի վերաբերյալ: Եվ ուրախանում ենք, երբ դպրոցներում աճ է նկատվում, որոշ դպրոցներում երեխաները չեն տեղավորվում, և մտածում ենք կից կառույցներ պատրաստելու մասին:

Շնորհավորում եմ կրթության ոլորտի բոլոր աշխատողներին: Ես միշտ հաճույքով եմ նշում նրանց դերակատարությունը հասարակության մեջ, որովհետև նրանք կրթում ու դաստիարակում են մի սերունդ, որը մեր ապագան է: Եվ ինչքան կարողանանք կրթության և դաստիարակության առումով մեր երեխաներին, ուսանողներին, ինչու չէ, նաև ուսուցչական կազմին հաղորդել այնպիսի գիտելիքներ, որ նրանք ճիշտ հասկանան և՛ պետության քաղաքականությունը, և՛ նրա խնդիրները, և՛ յուրաքանչյուրն իր նպաստը բերի մեր պետության զարգացմանը, այնքան ավելի ուժեղ կլինենք: Յուրաքանչյուրիս աշխատանքից է կախված մեր ապագան: Ցանկանում եմ, որ նվիրումով աշխատենք, և 2014 թվականը խաղաղության տարի լինի, ընտանիքներում լինի համերաշխություն, բոլորը լինեն առողջ, հոգսերից թեթևացած, և ամեն մարդու նպատակ՝ իրականացված:

**Հարցազրույցը վարեց**
**Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

# ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Մեր արցախական աշխարհը հայտնի է իր նվիրյալ զավակներով, մարդկանցով, ովքեր հաջողության հասնելով գիտության, քաղաքական գործունեության մեջ կամ գործարարության բնագավառում, ինքնակամ սկսում են պատասխանատվություն կրել ոչ միայն իրենց ընտանիքների ու հարազատների համար, այլև հետամուտ են լինում ժողովրդի խնդիրներին, նրա հոգսերին ու ցավերին:

Մեզ՝ Հացի գյուղի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվներին, բախտ վիճակվեց հանդիպել նման մի մարդու՝ ակադեմիկոս Գրիգորի Գաբրիելյանցին:

Գրիգորի Գաբրիելյանցի անմիջական աջակցության շնորհիվ շատ կարճ ժամանակահատվածում դպրոցը վերազինվեց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով՝ համակարգիչներով, սպորտային ու դպրոցական գույքով:

Մոտ օրերս կգործի նաև ինտերնետ կապ: Ամեն մի ժամանակաշրջան իր պահանջներն է թելադրում: Գիտության, տեխնիկայի զարգացման այսօրվա պայմաններում համացանցի առկայությունը դառնում է օրվա հրամայական: Ցանկացած տեղեկություն ձեռք բերելու հնարավորությունը նոր թափ է հաղորդում կրթությանը, բարձրացնում ուսման որակը:

Նման պայմաններում գյուղի դպրոցի երեխան, հատկապես սակավակազմ դպրոցի աշակերտները երբևէ թերարժեքության բարդույթ չեն ունենա և կհամոզվեն, որ իրենց մտային հզորությամբ կարող են աշխարհի նվաճել: Բնակավայրը կանգուն է իր դպրոցով: Իսկ մեր դպրոցը դարեր շարունակ սոսկ կրթություն ստանալու օջախ չի եղել, այլ նաև՝ ազգապահպանման, սերունդների ոգու ամրության վայր:

Գյուղական դպրոցը նաև գյուղը մահացումից փրկող կարևոր օջախ է, գյուղի մշակութային, հասարակական կյանքի ակտիվ կազմակերպիչն ու նախաձեռնողը:

Համակարգչային նոր կաբինետի առկայությունը ոգեշնչող փաստ է ոչ միայն դպրոցի, այլև ամբողջ համայնքի համար:

Գրիգորի Գաբրիելյանցի գործունեությունը ազգի, հայրենիքի հանդեպ անմնացորդ նվիրումի օրինակ է: Նման մարդկանց կյանքը միայն իրենցը չէ, այլև շարունակվում է երախտապարտ սերունդների սրտում, հացեցիների հիշողություններում:

Մեր՝ ժամանակին թագավորական կարգավիճակ ունեցող Հացի գյուղի ամբողջ բնակչության, ուսուցչական կոլեկտիվի և աշակերտների անունից խորին շնորհակալություն ենք հայտնում Գրիգորի Գաբրիելյանցին, «Ապագա սերունդների հիմնադրամի» կառավարիչ Ստեփան Սահակյանին՝ այսպիսի արժեքավոր նվիրատվության համար և խոստանում, որ դպրոցում մեծացող ապագա քաղաքացին լինելու է ազատ Արցախի հայ մարդու լիարժեք հատկանիշներով օժտված կերպար:

**Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Հացու հիմնական դպրոցի փնօրեն**

ԶԻՆՈՒԺ

# ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆ Ի ՎԻՃԱԿԻ Է ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդույթի համաձայն, տարեմուտին ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ամփոփեց Պաշտպանության բանակում տարվա ընթացքում կատարված աշխատանքները, ունեցած հաջողությունները, բացթողումները, ինչպես նաև իրազեկեց հաջորդ տարվա անելիքների մասին:

ԼՂՀ ռազմական գերատեսչության ղեկավարի խոսքով՝ պլանավորված բոլոր միջոցառումները բանակում իրականացվել են: Առանձնակի ուշադրություն է դարձվել պետական սահմանի պաշտպանությանը, Արցախի ժողովրդի անվտանգության ապահովմանը, զորամասերի ստորաբաժանումների մարտունակության բարձրացմանը, սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացմանը, սպառազինության համալրմանը, զորքերի պատրաստվածության բարձրացմանը, անձնակազմի սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանը և մնացած բոլոր խնդիրներին, որոնք վերաբերում են զորամասերի և ստորաբաժանումների առօրյա գործունեությանը:



Մի քանի աստիճանի ստուգումների արդյունքներով՝ ստորաբաժանումները ստացել են բավարար և լավ գնահատականներ:

Մ. Հակոբյանը մասնավորապես մատնանշեց ՀՀ նախագահի գլխավոր ռազմական տեսուչի կողմից հանկարծակի ստուգման ենթարկված տանկային բրիգադը և 4-րդ պաշտպանական շրջանը՝ ընդգծելով հետևյալը. տանկային բրիգադից ստուգումներին մասնակցել է միայն 118 միավոր զրահատեխնիկա: Այս թիվը նա շեշտեց հետևյալ նպատակով. պատերազմի ողջ ընթացքում մեր ամբողջ զինված ուժերում այդքան զրահատեխնիկա չենք ունեցել:

Նախարարը, որպես կարևոր ուղղություն, անդրադարձավ մարտական հերթապահությանը՝ նշելով, որ այսօր բանակի մեկ երրորդ մասն իրականացնում է մշտական մարտական հերթապահություն և գտնվում է հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում: Հայտնի է, որ հակառակորդն անընդհատ սադրանքներ է անում առաջնագծում՝ փորձելով բարձրացնել լարվածությունը այնտեղ: Իրականացրած հիմնական աշխատանքներն ուղղված են եղել պետական սահմանի պաշտպանության, ինչպես նաև զինծառայողների անվտանգության ապահովմանը, նաև դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարին: «Կարող ենք փաստել և վստահաբար ասել, որ այսօր առաջին գծում ծառայող զինվորը չի կարող հակառակորդի կողմից խոցվել, եթե չխախտի անվտանգության կանոնները: Եվ դիվերսիոն-հետախուզական խմբերը չեն կարող աննկատ ներթափանցել Պաշտպանության բանակի խորքը, ինչպես նաև դիվերսիոն գործողություններ կատարել առաջին գծում հերթապահություն իրականացնող զինծառայողների դեմ»,- ասաց նախարարը:

ՊԲ-ի կողմից ձեռնարկված զսպիչ գործողությունների շնորհիվ նախորդ տարվա համեմատ այս տարի բավականին նվազել են հակառակորդի կողմից հրաձգության դեպքերը, ինչպես նաև դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցման փորձերը: Տարեսկզբին եղել է նման երեք դեպք, որից երկուսը մեր զինծառայողների կողմից ժամանակին հայտնաբերվել են, և խումբը, վնասներ կրելով, ետ է նահանջել, մյուս դեպքը՝ ականապատված դաշտում կորուստ կրելով՝ վերադարձել են: Նաև նվազել է կրակոցների թիվը: Հրազենային զենքից անցյալ տարի եղել է 13609 դեպք, այս տարի՝ 10867, բայց որոշակի աճ է ունեցել խոշոր տրամաչափի դիպուկահար զենքերից կրակոցների թիվը: Անցած տարի եղել է 476 դեպք, այս տարի՝ 597:

Այս տարվա ընթացքում մենք հակառակորդի կողմից ունեցել ենք մահվան ելքով երկու դեպքեր, և երկուսն էլ կատարվել են զինծառայողի կողմից անվտանգության կանոնների խախտման պատճառով: Հակառակորդի կորուստները կազմել են 17 զինծառայող:

Հաջորդ ուղղությունը սպառազինության և ռազմական տեխնիկայի համալրումն է: Մ. Հակոբյանն իրազեկեց, որ բավականին մեծ տեխնիկա և սպառազինություն ենք ներկրում, և դա շարունակվելու է:

Կատարված աշխատանքների մյուս ուղղությունը անձնակազմի, նրա ուսուցմանն ու դաստիարակմանն ուղղված միջոցառումներն են՝ միտված անձնակազմի պատրաստվածությանն ու կարգապահության բարձրացմանը:

Շարունակվել է հրամանատարական կազմի ուսուցման և համալրման գործընթացը: Նախարարը առանձնահատուկ նշեց, որ մոտ 350 հոգով ավելացել է պայմանագրային զինծառայողների համալրումը ՊԲ-ում:

Որոշակի հաջողություններ են եղել կարգապահության ոլորտում: Այս տարի բավականին մեծ աշխատանք է իրականացվել այս ուղղությամբ: Այսօր բոլոր դիրքերում մարտական հերթապահություն իրականացվում է 9 հոգուց ոչ պակաս՝ 4 հերթափոխով:

Հաջորդ ուղղությունն առնչվում է բանակ- հասարակություն կապին: Կանոնակարգվել են զինծառայողների ծնողների այցելություններն իրենց որդիներին: Ծնողին ինչպես հարկն է, դիմավորում են, տեղավորում զորանոցում, որտեղ նա ծանոթանում է իր երեխայի ծառայության պայմաններին: Ծնողին (հորը) թույլատրվում է մեկ օր մասնակցել որդու մարտական հերթապահությանը: Դա իր դրական արձագանքն է ունեցել: Բանակ-հասարակություն լարվածությունը թուլացել է նաև նորակոչիկի՝ վիճակահանությամբ իր ծառայության վայրն ընտրելը, որն արդեն մեկ տարի է, գործում է ՊԲ-ում: «Ամեն ինչ շատ թափանցիկ է: Ծնողների կողմից բողոքարկման հիմքեր չկան, ինչը հեշտացնում է մեր գործը»,- ասաց Մ. Հակոբյանը:

Անցյալ տարի, ընդհանուր առմամբ, մահվան ելքով և վիրավորման դեպքերի քանակը բավականին նվազել է: Մ. Հակոբյանն ասել էր, որ արտակարգ պատահարների տեսակետից արդյունքները ամենաքիչն էին: Այս տարի նույնպես որոշակի հաջողություններ են գրանցվել. մահվան ելքով դեպքերը նվազել են 6-ով (37%-ով): Նա շեշտեց, որ այդպիսի նվազում երբևէ չենք ունեցել: Վիրավորման դեպքերը նվազել են 11-ով կամ 30%-ով, որը ևս բավական մեծ ցուցանիշ է, և սա բանակի ողջ հրամանատարության ու նաև զինվորների հետ կատարած աշխատանքի արդյունք է: Բայց ցավոք, դրա հետ մեկտեղ եղել են ժամկետային զինծառայողի մահվան և զոհվելու 10 դեպքեր, որից 2-ը հակառակորդի կողմից, 3-ը՝ ինքնասպանություն: Չնայած անցյալ տարվա համեմատ այս վերջինը նվազել է 50%-ով, բայց բոլոր դեպքերում ինքնասպանության դեպքերը ծանր հանցագործություն են: Ցանկացած ինքնասպանություն ունի իր պատճառներն ու հետևանքները: Այդ 3-ից 2-ը ինքնասպանության հասցման դեպքեր են, 1-ը մինչև վերջ դեռևս բացահայտված չէ: Համածառայողի կողմից եղել է ոչ դիտավորյալ սպանության 2 երկու դեպք. 1-ը զենքի հետ վարվելու կանոնների խախտման արդյունք է, մյուսը՝ մարտական հերթապահության ժամանակ ազդականչին չպատասխանելու և նրան հակառակորդի տեղ դնելու:

Նախարարը հավաստիացրեց, որ ընդհանուր առմամբ, այս ուղղությամբ շարունակվում են աշխատանքները և գտնվում են հրամանատարության ուշադրության կենտրոնում:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել սոցիալական ոլորտում՝ զինծառայողներին սոցիալական փաթեթ տրամադրելով՝ հիփոթեքային վարկի մարման, առողջության ու հանգստի կազմակերպման հնարավորություններ ստեղծելով:

Դեռևս չլուծված է մնում սպաներին բնակարանով ապահովման խնդիրը: Այսօր ՊԲ-ում գրանցված է 1228 զինծառայող, որոնք գրանցված են բնակարանային հերթում:

Լրագրողները նախարարին ուղղեցին բազմաթիվ հարցեր: Մասնավորապես, Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու հետ կապված, որոշ լրատվամիջոցներում քննարկվող՝ Ղարաբաղում ռուսական խաղաղարար ուժերի տեղակայման հարցի առնչությամբ Մ. Հակոբյանն ասաց. «Խաղաղարար ուժերի տեղակայման հարց չի քննարկվել և, կարծում եմ, երբևէ չի քննարկվի: Դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ մեր Պաշտպանության բանակն ի վիճակի է ապահովելու ԼՂՀ ժողովրդի անվտանգությունը: Արցախը խաղաղապահ ուժերի կարիք չունի»:

Ադրբեջանի կողմից սպառազինության մրցավազքի չափերի մեծացման հարցին այսպես պատասխանեց. «Սպառազինության մրցավազքը երբեք ինքնանպատակ չպետք է լինի: Այսօր որևէ մեկին չես կարող խոսքերով խաբել: Դա բոլորը հասկանում են: Դա հասկացել են այն երկրները, որոնց բյուջեի մեծ մասը կազմել է սպառազինությունը՝ Լիբիայում, Իրաքում, այսօր՝ Սիրիայում: Այդ բոլոր պետությունները, այնքան մեծ սպառազինություն ունենալով, չեն կարողացել իրենց պաշտպանել: Դա որոշիչ չէ: Որոշիչը գաղափարն է, որոշիչը մարդու պատրաստակամությունն է՝ իր հայրենիքի համար պայքարել և հաղթել: Իսկ այս ուղղությամբ մենք խնդիր չունենք: Մեր սպառազինությամբ ի վիճակի ենք Ադրբեջանին երեք անգամ ոչնչացնել: Բայց մեր բոլոր գործողություններն ուղղված են նրան, որ պատերազմ չսկսվի: Բայց նաև չենք կարող ձեռքներս ծալած նստել ու ասել՝ խաղաղություն ենք քարոզում և չենք սպառազինվում: Մենք սպառազինվելու ենք այնքան, ինչքան մեզ անհրաժեշտ է մեր խնդիրն իրականացնելու համար»:

**«Լուսարար»**

# ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ԱՆՈՒՆԻՑ Է ՍԿՍՎՈՒՄ...

*Երբ մի նոր մանչ ես ծնում,*
*Անունն ինչո՞ւ Հայկ չես դնում...*
*Իր ազգինը ով չսիրի՝*
*Թշնամին է ողջ ազգերի...*

**Հովհ. Շիրազ**

Հայկ էր նրա անունը՝ ծնված 1973թ. դեկտեմբերի 9-ին: Ծնողները կանխազգացին, որ իրենց որդին ժողովրդի փրկության համար կպայքարի, ժողովրդի արժանի զավակը կդառնա, և Հայկ կոչեցին նրան:

Հա՛յկ, քո անմահ անունը կգրվի որպես հայրենասիրության, անձնազոհության, քաջագործության վկայագիր: Դու ապրեցիր ուրիշների համար, Արցախ հայրենիքի համար, քեզ համար, ավա՜ղ, բաժին չթողնելով:

Նա ընդամենը 19 գարուն ապրեց: Ապրեց, որ փրկի հայրենիքը, կռվեց, որ գոյատևենք, զոհվեց, որ հաղթենք: Ազատությունը վերուստ հենց այնպես չի տրվում մարդուն, այն նվաճելու համար պայքար ու զոհեր են պահանջվում:

- Կմեռնե՛նք, բայց մեր ազգը կապրի ազատ՝ այս է Հայկ նահապետից ժառանգություն ստացած մեր առաջին պատվիրանը, և այն պիտի պահպանե՛նք սրբությամբ:

Այս պատգամով է առաջնորդվել նաև նա՝ Հայկ Բալասանյանը: Նա այն հերոս ազատամարտիկն էր, ով մեր հուշերում անմահացավ հերոսի մահով, պայքարեց հայրենիքի ազատության համար՝ չխնայելով իր մատաղ կյանքը:

Նա անմահացավ իր հարազատ հայրենիքի դպրոցի համար, ու նրա փայլուն ու վառ կերպարով կդաստիարակվեն մեր շատ սերունդներ: Այժմ Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցը կրում է նրա սուրբ անունը:

Դեկտեմբերի 9-ը մեր դպրոցի պատմության մատյանում արձանագրվեց հուշ-ցերեկույթով՝ նվիրված Հայկ Բալասանյանի ծննդյան 40-ամյակին: Այդ օրն ասես բնությունն էլ էր գիտակցում օրվա խորհուրդը. արևն անցավ սարերի հետևը՝ ճան ապարի տալով առաջին ձյունին:



Հերոսներին մեծարելը նույնպես հերոսություն է: Այս ավանդույթին հավատարիմ են մեր՝ Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անունը կրող հ.5 հիմնական դպրոցի աշակերտները: Նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 9-ը դպրոցում հայտարարված էր միամսյակ՝ նվիրված Հայկ Բալասանյանի 40-ամյակին: Կազմակերպվեցին և անցկացվեցին տարաբնույթ միջոցառումներ. ասմունքի մրցույթ, պատի թերթերի, նկարների, շարադրությունների մրցույթներ «Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի», «Մահ իմացյալ՝ անմահություն է», «Անմահները հրամայում են» և այլ վերնագրերով: Միամսյակին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դպրոցի 3-6-րդ և 7-9-րդ դասարանների աշակերտները:

Միամսյակը հանրագումարի բերվեց դեկտեմբերի 9-ին կայացած հուշ-ցերեկույթով: Համաքաղաքային այս միջոցառմանը հրավիրված էին պետական այրեր, կրթության ասպարեզի ներկայացուցիչներ, զինվորներ, քաղաքի դպրոցների փոխտնօրեն-կազմակերպիչներ, հերոսի հարազատները, մարտական ընկերները: Հուզմունքն ու ոգևորությունը համակել էին բոլորին: Բացման խոսքով հանդես եկավ միջոցառման կազմակերպիչ Մարինե Խաչատրյանը: Այնուհետև աշակերտները ներկայացրին Հայկ Բալասանյանի կենսագրությունը, ինչեցին բանաստեղծություններ, խոհեր ու ռազմաշունչ երգեր: Հուշ-ցերեկույթի ողջ ընթացքում մեծ էկրանի վրա ցուցադրվեցին Հայկի մանկության և դպրոցական տարիների նկարները, պատվոգրերն ու կրթության վկայականները: Դահլիճում թևածում էր թախծոտ տրամադրությունը: Տխրություն կար բոլորի հայացքներում ու արցունք՝ աչքերին:

Հուզիչ էին Հայկի դպրոցական և մարտական ընկեր, այժմ ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանի, դասավանդող ուսուցիչ, այժմ ԿԳՆ կրթության տեսչության պետ Ս.Արզումանյանի ելույթները: Միջոցառման մասնակիցներին իր շնորհակալական խոսքն ասաց զոհված ազատամարտիկի հայրը՝ Սաղաթել Բալասանյանը և հուշ-մրցանակ հանձնեց 9-րդ «ա» դասարանի աշակերտներին՝ միջոցառմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար: Հուշ-ցերեկույթի վերջում դպրոցի տնօրեն Վ. Ղազարյանը գովասանքի և շնորհակալական խոսք ասաց ցերեկույթի բոլոր մասնակիցներին և պատվոգրեր հանձնեց մրցանակային տեղեր գրաված աշակերտներին:

Միջոցառումը ևս մեկ անգամ հաստատեց, որ հայ ժողովուրդը, ունենալով նման սերունդ, կապրի հավերժ:

**Սուսաննա ԴԱԴԱՅԱՆ**
**Ստեփ. Հայկ Բալասանյանի անվան հ. 5 հիմն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. մանախմբի ղեկավար**

ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐ

# ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼԸ



Բոլոր ժամանակներում մարդու ուղեկիցը գիտելիքն է: Այն ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախ՝ ցանկություն և կարող մի ուժ, որն ի վիճակի է դնել նրա կուտակման հիմնաքարը: Գաղտնիք չէ, որ գիտելիքի հիմնաքարը դնողներից մեկն էլ, թերևս, ամենաառաջնայինը, ուսուցիչն է: Այդպիսի ուսուցիչ է Լուսինե Սաֆարյանը:

Ծնվել ու մեծացել է Մարտունու շրջանի Ղուզե Ճարտար գյուղում, մանկավարժներ Բաբկեն Սաֆարյանի (պատմաբան) և Աիդա Հովհաննիսյանի (հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի) ընտանիքում: Ավարտել է ԱրՊՀ պատմության բաժինը: Աշխատանքային առաջին փորձը ստացել ու շարունակում է աշխատել Ղ. Ճարտարի հիմնական և Ճարտարի հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցներում: Ունի տասը տարվա աշխատանքային փորձ: Դասավանդում է պատմություն, հասարակագիտություն, հայոց եկեղեցու պատմություն՝ միջին և ավագ օղակներում:

Հիացած երիտասարդ ուսուցչուհու հաջողություններով՝ ճիշտ համարեցի հարցազրուցել նրա հետ և, ինչու չէ, նաև բարձրաձայնել «Լուսարար»-ի օգնությամբ:

*- Օրիորդ Լուսինե, պարզապես սկսենք հենց Ձեր առաջին հաջողություններից: Ե՞րբ եք ունեցել այն, աշխատանքային ո՞ր տարում:*

- Առաջին հաջողությունս ունեցել եմ աշխատանքային վեցերորդ տարում, երբ Աշոտ Մովսիսյանն ու Սրբուհի Այդինյանը օլիմպիադայի շրջանային փուլում գրավեցին առաջին տեղը՝ պատմություն առարկայից:

*- Դա, անշուշտ, ոգևորիչ էր և, կարծում եմ, հենց դա է համարվել հենման կետ հետագա առաջընթացի համար: Ո՞ր դասարանի աշակերտների մոտ և ե՞րբ եք ունեցել հետագա առաջընթացը:*

- 2011-ից մինչև 2013 թվականը օլիմպիադայում իրեն լավագույնս է դրսևորել Ժենյա Հարությունյանը. նա, 8-րդ դասարանից սկսած, մասնակցում է պատմության օլիմպիադային, առաջին տարին շրջանային փուլում առաջին տեղ գրավեց, 9-րդ դասարանում, որպես Ղուզե Ճարտարի սան ԼՂՀ-ում և ՀՀ-ում գրավեց 2-րդ տեղ, իսկ այս ուսումնական տարում, սկսած ներդպրոցական օլիմպիադայից մինչև ՀՀ-ում կայացած օլիմպիադայի եզրափակիչ փուլ, գրավեց 1-ին տեղը՝ ներկայացնելով Ճարտարի հ. 1 հոսքային դպրոցը: 2013թ. Ղ.Ճարտարից Գարիկ Պետրոսյանը և Արման Հովսեփյանը օլիմպիադայի շրջանային փուլում զբաղեցրել են համապատասխանաբար 2-րդ և 3-րդ տեղերը:

*- Առարկայական օլիմպիադաներից բացի Ձեր աշակերտները մասնակցում են ինտելեկտուալ խաղերի: Երևի Ձեր մասնակցությունն անձնական օրինակ է Ձեր աշակերտների համար:*

- Ինտելեկտուալ խաղերի մասնակից եմ, իբրև երիտասարդական խմբի անդամ, միաժամանակ նախապատրաստում եմ դպրոցականներին: 2012թ. Ճարտարի հ.1 միջնակարգ դպրոցի սաները շրջանային բրեյն-ռինգում ճանաչվել են հաղթող և մասնակցել ինտելեկտուալ խաղի հանրապետական փուլին, ուր 0,5 միավորով զիջել են Ստեփանակերտի թիմին՝ հայտնվելով 2-րդ տեղում:

*- Կարծեմ, Ձեր աշակերտները մասնակցում են նաև ՀՀ-ում կազմակերպվող միջոցառումներին:*

- Դուք ճիշտ եք: Մեր աշակերտներն ակտիվորեն մասնակցում են մեր երկու հայկական հանրապետություններում իրականացվող միջոցառումներին: 2011թ. մասնակցել ենք «Հայ ասպետ» հեռուստամրցույթին: Նրանք լավ խաղ ցուցաբերեցին: Խաղի ընթացքում առավելագույն 11 միավոր («Հայ ասպետ») ստացավ մեր թիմը, և կարծես թե մոտ էր հաղթանակը, բայց վերջում հայտնվեցինք 2-րդ տեղում: Իսկապես, լավ էինք պատրաստվել և չնչին հաջողության պարագայում առաջինը կլինեինք:

*- Վերջերս մասնակցել եք Ծաղկաձորում կազմակերպված Համահայկական օլիմպիադային: Ձեր աշակերտներից ովքե՞ր մասնակցեցին, և ի՞նչ հաջողություններով վերադարձաք:*

- 2013թ. օգոստոսի 9-15-ն ընկած ժամանակահատվածում մասնակցեցինք ՀՀ կրթության և գիտության և Սփյուռքի նախարարությունների կողմից երկու տարին մեկ անցկացվող Համահայկական հայագիտական օլիմպիադային և հայոց եկեղեցու պատմության մրցույթին՝ Ծաղկաձորում, որին 8 երկրներից մասնակցում էին 150 դպրոցականներ: Այն կազմակերպված էր երկու ձևաչափով՝ հայագիտական օլիմպիադա, որը ներառում էր հայոց պատմություն, հայոց լեզու և հայ գրականություն, ինչպես նաև հայ մշակույթի պատմության գրավոր և բանավոր փուլեր, երկրորդը՝ հայոց եկեղեցու պատմության գրավոր և բանավոր մրցույթ: Զուգահեռ անց էին կացվում նաև ասմունքի, ճարտասանության և երգի մրցույթներ: Հայագիտական օլիմպիադայում Սրբուհի Այդինյանը և Մարիամ Պողոսյանը գրավել են 3-րդ տեղը, իսկ Ժենյա Հարությունյանը՝ 2-րդ տեղը: Հայոց եկեղեցու պատմության մրցույթում Ժ. Հարությունյանը գրավել է առաջին տեղը: Տպավորիչ էր մրցանակաբաշխության ժամանակ հոգևորականի գովեստի խոսքը Ժենյայի հասցեին, ով ասաց, որ նա և՛ գրավոր, և՛ բանավոր փուլերում վաստակել է առավելագույն 20 միավոր: Մարիամ Պողոսյանը նույն մրցույթում արժանացել է շնորհակալագրի, իսկ Սրբուհի Այդինյանը, Գուրգեն Տոնյանը, Ռուբեն Մարգարյանը մրցանակներ են ստացել «Մտքի թռիչք», «Մաշտոցական» և «Եկեղեցասիրություն» անվանակարգերում: Ճարտասանության մրցույթում անզուգական էր Սրբուհի Այդինյանը: Նա պարգևատրվեց «Պատանի ճարտասան» դիպլոմով՝ դառնալով պատանի ճարտասան, իսկ Ժենյա Հարությունյանը ճարտասանության և ասմունքի համար պարգևատրվեց շնորհակալագրով: Արայիկ Սարգսյանը իր «Զինվորի երգ»-ով հուզեց ներկաներին և հաղթեց երգի մրցույթում: Սրբուհին իր ասմունքով հայտնվեց գալա համերգում: Ոգևորությունն աննախադեպ էր: Օլիմպիադայի ամենահաճելի պահերից էր Գագիկ Գինոսյանի կողմից ազգային պարերի ուսուցումը, որին մեծ սիրով էինք մասնակցում: Օլիմպիադան, իսկապես, հասավ իր նպատակին. ծանոթացան, մտերմացան, ընկերացան աշխարհի տարբեր երկրներից եկած հայ դպրոցականները:

*- Պատկերացնում եմ ինչ ոգևորությամբ եք վերադարձել Արցախ: Ի՞նչ տպավորություն թողեցիք Հայաստանի ներկայացուցիչների շրջանում:*

- Նրանք, իրոք, զարմացած են մեր աշակերտների գիտելիքներով, մտահորիզոնով, ինտելեկտով, հետաքրքրություններով, աշխարհընկալմամբ:

*- Ի՞նչ զգացումներ եք ունենում մրցույթներից հետո: Հոգնածություն զգո՞ւմ եք:*

- Ես շատ եմ ուրախանում, որ խելացի սաներ ունենք և կարողանում ենք արդյունք ցույց տալ, այնքան, որ հոգնածություն չեմ զգում, երևի ոգևորությունը չի թողնում: Միշտ ուրախությամբ ու հպարտությամբ եմ պատմում համամարդկային և ազգային արժեքներ կրող ու մտածելակերպ ունեցող մեր աշակերտների մասին: Ասածիս լավագույն վկայությունն այն է, որ երբ տեղեկացա «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության «Մենք ենք» ծրագրի մրցույթի անցկացման մասին, հավատացած էի, որ անպայման մեր դպրոցի սանը կհաղթի... Սպասումներս ավելի քան իրականացան, այն էլ այն դեպքում, երբ կազմակերպիչներն Արցախից մեկ մասնակից էին փնտրում: Լինելով մեր դպրոցում և շփվելով աշակերտների հետ՝ 3 աշակերտի՝ Սրբուհի Այդինյանին, Ժենյա Հարությունյանին և Արա Սարգսյանին ընդգրկեցին ծրագրում, ու նրանք դարձան «Մենք ենք» ծրագրի յոթերորդ սերունդը: Մեր աշակերտներն առաջարկված թեմաներով շարադրություն էին ուղարկել համացանցով և երեքն էլ հաղթող ճանաչվել: Հաղթողները մեկշաբաթյա լրագրողական դասընթաց անցան Ծաղկաձորում, իսկ նրանցից Արա Սարգսյանն ընտրվեց և մեկնեց Բաթումի քաղաք՝ մասնակցելու տարածաշրջանում պարբերաբար անցկացվող հայ, վրացի, ադրբեջանցի պատանիների մասնակցությամբ ձևաչափով ֆորումին, իսկ Սրբուհի Այդինյանը մասնակցեց Կիևում տեղի ունեցող սեմինարներին: Ստեփանակերտում մասնակցել ենք «Բրիտանական հաշտեցման ռեսուրսներ» կենտրոնի կազմակերպած «Երկխոսություններ ֆիլմերի միջոցով» կլոր սեղանին:

*- Հիանալի է: Ի՞նչ պլաններ կան առաջիկայում:*

- Վերջերս ստացանք նոր առաջարկ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության կողմից՝ մասնակցելու «Զարթոնքի սերունդ» խաղ-մրցույթին՝ Երևանում, որի նպատակն է բարձր դասարանցիների շրջանում մեծացնել հետաքրքրությունը պատմական թեմաների նկատմամբ: Համաձայնվել ենք, հայտն արդեն ուղարկել ենք, սպասում ենք, որ ուղարկեն գրականությունը, ու սկսենք պարապմունքները:

*- Գաղտնիք չլինի, եթե հարցնեմ՝ հերթափոխ ունե՞ք:*

- Հերթափոխ, կարծում եմ, դեռ կլինի: Միջին օղակում հաճախ եմ լսում պատմաբան-հնագետ դառնալու ցանկություն, իսկ նրանք, ովքեր խորը գիտելիքներ ունեն պատմությունից, հեռանկարում իրենց մանկավարժ չեն պատկերացնում, այլ պատմական գիտելիքները որոշել են օգտագործել իրավաբանական, քաղաքագիտական կամ միջազգային հարաբերությունների բնագավառում:

*- Մասնավոր պարապմունքներ ունենո՞ւմ եք:*

- Երբևէ չեմ ունեցել, քանզի օրվա գերակշիռ մասը դպրոցում եմ՝ արտաժամյա պարապմունքներում օլիմպիադաներին պատրաստվելիս:

*- Գիտեմ, որ ակտիվ եք նաև հասարակական կյանքում: Ինչո՞վ է արտահայտվում:*

- Գյուղում կազմակերպում ենք երթեր, խարույկ վառում՝ մի կողմ չթողնելով մեր ազգային, ֆիդայական երգերը: Ներդպրոցական միջոցառումներն այնքան ընդգրկուն են լինում, որ համագյուղական միջոցառում են դառնում: Ավանդույթ է դարձել համագյուղական մակարդակով նշել Ցեղասպանության զոհերի հիշատակը, որն անց ենք կացնում ջահերթով: Ճիշտն ասած, դա աշակերտների առաջարկությունն էր: Կարծում եմ, ամենադժվարն առաջարկն է, իսկ ամենադյուրինը՝ այն ի կատար ածելը:

*- Ինչո՞վ եք զբաղվում ազատ ժամանակ:*

- Ազատ ժամանակ գրեթե քիչ եմ ունենում, բայց եղած դեպքում էլ հիմնականում արձակուրդներին, անպայման ընթերցում եմ, երաժշտություն լսում:

*- Գիտեմ, որ Դուք մասնակցում եք ասմունքի մրցույթներին: Ի՞նչ թեմաներով եք սիրում ասմունքել:*

- Իմ գրական և գեղարվեստական ճաշակի ձևավորման վրա անմիջական, ուղղակի ազդեցություն են թողել ծնողներս: Սկսել եմ Պ.Սևակից: Նրա «Որդուս» բանաստեղծությունը իմ այցեքարտը եղավ: Գևորգ Էմինի «Սասունցիների պարը» և «Հավերժի ճամփորդը», Ե.Չարենցի «Նայադների նման»-ը շատ-շատ եմ սիրում: Երկու անգամ մասնակցել եմ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և «Արցախակերտում» հասարակական կազմակերպության կողմից անցկացված մրցույթին և երկու անգամ էլ 2-րդ տեղն եմ զբաղեցրել:

*- Ո՞րն է մարդու ամենամեծ արժանիքը: Ձեր ապրելակերպի մեջ ավելի շատ ի՞նչն եք արժեքավոր համարում:*

- Ինձ համար ամենամեծ արժանիքն անկեղծությունն է, իսկ արժեքավորը՝ նվիրումը աշխատանքին:

*- Ի՞նչը չէիք հանդուրժի:*

- Անտարբերությունը, այն կարող է մարդուն ոչնչի հասցնել կամ կործանել:

*- Ի՞նչ կուզենայիք, որ իրականություն դառնար:*

- Կուզեի հնարավորություն ընձեռվեր աշակերտների հետ միասին այցելել ՀՀ այնպիսի դպրոցներ, որտեղ ուսուցումն այլընտրանքային է: Կցանկանայի լինել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, «Այբ» դպրոցում, ծանոթանալ նրանց աշխատանքային փորձին:

*- Թող իրականանան Ձեր բոլոր ցանկությունները: Այսպիսի հարուստ աշխատանքային փորձ ունեցողի համար, կարծում եմ, հեռու չէ դրանց իրականացումը: Շնորհակալություն Ձեզ՝ հայրենանվեր աշխատանքի և հետաքրքիր հարցազրույցի համար:*

**Հարցազրույցը՝**
**Գայանե ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ**
**Ջրավանի միջն. դպրոցի**
**ՄԿԱԳՏՏ**

# ԱՀԱ ԻՆՉՊԵՍ

*(Ուսուցման մեթոդիկա)*

Մայրաքաղաքի Հովհ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցում իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցում: Նաև՝ դպրոցում կա երկու հատուկ դասարան (համակազմ)՝ լսողության կորուստ ունեցող երեխաների համար: Կրտսեր դպրոցի համակազմ դասարանում սովորում է չորս երեխա, իսկ հիմնական դպրոցում՝ հինգը: Ըստ էության, այս դասարաններում ուսուցումը պետք է կազմակերպել հատուկ ծրագրերով, մինչդեռ գործընթացն իրականացվում է հանրակրթական ծրագրերով և առարկայական չափորոշիչներով: Պարզ է առաջացած դժվարությունների բնույթն ու չափը: Այս պարագայում մեծ դեր են խաղում դասավանդող ուսուցիչները, որոնք անում են իրենցից կախված ամեն ինչ՝ հնարավորինս դյուրին դարձնելու այդքան դժվար, յուրահատուկ ուսուցման գործընթացը: Ուսուցիչներ, որոնք այդ երեխաներին հարազատի նման են սիրում, անչափ հոգատար են և ջերմ, նվիրվում են անվերապահորեն: Եվ այս ամենը ակամա փոխանցվում է դպրոցի բոլոր աշակերտներին, ուսուցիչներին, աշխատողներին:

Վերջերս այս երեխաների համար արձանագրվեց հետաքրքիր, յուրօրինակ միջոցառում: Հեղինակը և նախաձեռնողը տարրական համակազմ դասարանի դասվար Աիդա Սևլիկյանն էր: Ահա ինչպես «Կերպարվեստ» առարկայի դասը նա դարձրեց յուրատեսակ:

«Սոֆիա» կենտրոնից հրավիրեց Նարնջագույն Փղիկին և նրա օգնականին, որոնք իրականացնում են ձեռային աշխատանքներ՝ նկարում, ներկում, ծեփում: Նրանք իրենց հետ բերել էին թղթերին փակցված տարբեր առարկաների ձևանմուշներ և ներկեր (գուաշ): Դասարանում թևածում էր երգը (չնայած երեխաները չէին լսում): Փղիկը պարում էր, զվարճացնում երեխաներին:

Օգնականը ներկեր էր լցնում ձևանմուշների վրա, ցույց տալիս ներկելու ձևը, օգնում երեխաներին: Հոգնելու դեպքում երեխաները պարում էին Նարնջագույն Փղիկի հետ, ցատկոտում, թռչկոտում ուրախանում: Փայլում էին նրանց աչքերը, անչափ մեծ էր նրանց ոգևորությունը, որ արտահայտում էին մարմնի շարժումներով, մատնաշարժումներով:

Գործընթացը տևեց մոտ մեկ ժամ: Առավել ուրախ էին ուսուցիչները և հատկապես՝ ծնողները:

Դժվար էր բաժանման պահը: Երեխաներն ուզում էին, որ նրանք չգնան: Ուզում էին, որ Փղիկը միշտ իրենց մոտ լինի: Բայց... ինչ արած: Գնալուց առաջ նրանց շնորհակալություն հայտնեցին բոլորը՝ ուսուցիչները, ծնողները: Շնորհակալություն սքանչելի բարեգործության համար, որի առյուծի բաժինը գուցե նախաձեռնող ուսուցչինն է: Իսկ Նարնջագույն Փղիկի և օգնականի վարձը, թերևս, երեխաների ժպտացող աչքերն էին և թափահարող ձեռքերը:

**Ռիտա ՊՈՂՈՍՅԱՆ**
**Հատուկ մանկավարժ**

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ

# ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ` ՆՈՒՅՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



Մարտունու արհեստագործական ուսումնարանն իր տեսակի մեջ եզակի հաստատություն է, որ կարողացել է գոյությունը պահել իր ստեղծումից` 1973 թվականից մինչ այսօր: Քառասուն տարի նույն ճանապարհին է: Հարթ չի եղել այդ ճանապարհը, մանավանդ Արցախյան պատերազմի և նրան հաջորդած տարիներին, որոնք շենքային, գույքային, նյութատեխնիկական բազայի, սովորողների թվաքանակի կորուստներ պատճառեցին: Այս հանգամանքները, չասենք կասեցրին ուսումնարանի գործունեությունը, ստիպեցին տեղում երկար դոփել, բայց ո՛չ երբեք կանգնել; Սակայն դա ժամանակավոր էր: Մարտունու ուսումնարանը նորից սկսեց քայլ անել, իսկ վերջին հինգ տարիներին` անգամ առաջ գնալ:

Վերջերս մենք եղանք այստեղ: Տնօրեն Սլավիկ Հայրապետյանի հետ շրջայց կատարեցինք ուսումնարանում: Առաջինը, որ գրավեց մեր ուշադրությունը, ուսումնարանի բակում կանգնած երեք ավտոբուսներն էին` ճակատամասին խոշոր տառերով գրված` «Արհեստագործական ուսումնարան»: Տնօրենը հպարտությամբ ասաց, որ դրանք մեծապես նպաստել են սովորողների թվաքանակի աճին: Կրթության և գիտության նախարարության աջակցությամբ ինչ ստացել են ավտոմեքենաները, սովորողների թվաքանակի կտրուկ աճ է նկատվել: Հինգ տարի առաջ, երբ ինքը ստանձնեց տնօրենի պարտականությունները, 86 սովորող կար, հիմա նրանց թիվը հասնում է 188-ի: Ավտոբուսներն աշխատում են ամեն օր, երեք ուղղությամբ` Կարմիր Շուկա-Մաճկալաշեն-Մարտունի, Ճարտար-Խնուշինակ-Սպիտակաշեն-Մարտունի, Հացի-Բերդաշեն-Աշան-Մարտունի և հակառակ երթուղով` ամեն օր, ժամը 8-ն անց 45-ին սովորողներին հասցնելով դպրոց, իսկ դասերից հետո նրանց տեղափոխելով իրենց գյուղերը: Նախարարության միջոցով այդ հինգ տարվա ընթացքում այլ աջակցություններ էլ են ստացել: Նյութատեխնիկական բազա են ստեղծել, տրակտորներ ձեռք բերել, կոմբայն, ավտոերթևեկության համար մեքենաներ` 3 բեռնատար, մեկ մարդատար: «Նկատել ենք, որ ուսումնարանը վերակենդանանում է»,- ասում է տնօրենը` նշելով, որ արդեն սկսել են արտադրանք տալ: Ավտոբուսները նաև համայնքների կարիքների համար են տրամադրում, ինչի դիմաց գումար են ստանում: Վար են անում: Ստացած եկամուտով շարքացան են ձեռք բերել, զոդման սարք, գութան: Ուզում են իրենց աշխատանքով գումար հայթայթել, որպեսզի կուլտիվացիայի համար տեխնիկա ձեռք բերեն: «Որպեսզի ամեն ինչի համար վիզ չծռենք պետությանը»,- շարունակեց նա:

Խմբերում պարապմունքներ էին ընթանում: Ավտովարորդների խմբերից մեկում մաթեմատիկայի դաս էր: Գրատախտակին բանաձևեր, գծագրեր էին նշված, դասատուն պատմում էր դասը, հետո տղաներից մեկին կանչեց գրատախտակի մոտ: Այո, ուսումնարանում նաև միջնակարգ կրթություն են տալիս` թեթևացված ծրագրերով: Այլ խոսքով ուսումնարանը կոչվում է արհեստների ավագ դպրոց, այսինքն, միջնակարգ դպրոց` արհեստների թեքումով: Այստեղ էլ սովորողները հետ չեն մնում միջնակարգի իրենց հասակակիցների առօրյայից: Կազմակերպում են զանազան միջոցառումներ, տոն և հիշարժան օրերին նվիրված մրցույթներ: Օրինակ` «Արծվիկ» ռազմամարզական խաղում ուսումնարանը շրջանում գրավել է առաջին տեղը և հանրապետական մրցությունում ինքն է ներկայացրել Մարտունու շրջանը` գրավելով 2-րդ տեղը: Նաև հրաձգության հանրապետական մրցությունում է շրջանը գրավել 2-րդ տեղը, որի հավաքականը դարձյալ ձևավորվել է ուսումնարանի բազայի վրա: Տնօրենն ասաց, որ ձգտում են եկող տարի առաջին տեղում լինել: «Իսկ ինչո՞ւ ոչ,- հռետորական հարց է տալիս և ինքն էլ պատասխանում,- բոլորն էլ գյուղի տղաներ են, անարատ սննդամթերքով մեծացած, առողջ, ֆիզիկապես ուժեղ»:



Մոնթե Մելքոնյանի ծննդյան օրն էլ մեծ շուքով նշել են: Իսկ վերջում ամբողջ ուսումնարանով` ուսուցիչներով, սովորողներով, աշխատողներով բոլորել տոնական սեղանի շուրջը, որտեղ դրված էին Ավոյի սիրած ուտեստներն ու խմիչքները: Ամեն տարի են այդպես նշում: Մի շարք պատճառներ կան դրա համար: Նախ` որ Մոնթեն բոլորինն է և ամենից շատ` մարտունեցիներինը: Այստեղ ասում են` Մոնթեն մարտունեցիների Աստվածն է: Իսկ ուսումնարանը նաև իր մասնավոր պատճառներն ունի. 1992թ. հունվարի 21-ից մինչև 1992-ի նոյեմբերի 1-ը այստեղ գործել է Մարտունու պաշտպանական շրջանի շտաբը` լեգենդար Մոնթե Մելքոնյանի գլխավորությամբ: Այս գրությամբ ցուցանակ տեսանք ուսումնարանի պատին: Իսկ նրա տնօրեն Ս. Հայրապետյանի աշխատասենյակի գլխավերևում Ավոյի մեծադիր նկարն է: Դա միայն Մարտունու լեգենդար հրամանատարի նկատմամբ ունեցած նրա հարգանքից չէ, այլև անձնական սուրբ հիշատակների արտահայտություն:



«Արցախյան պատերազմի տարիներին ես շրջանի միլպետն էի: Հենց այդ տարիներին էլ Ավոն է եկել: Ես նրան տրամադրել էի իմ ծառայողական մեքենան ու իմ վարորդ Կոմիտասին: Կատակով ասաց` ոստիկաններից միշտ փախչում էի, հիմա ոստիկաններն են իմ ընկերները»:

Ուսումնարանը հիշողություններ ունի` կապված նաև մեկ ուրիշ հերոսի` «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Վլադիկ Խաչատրյանի (Կոմիսար) հետ: «Երբ եկա տնօրեն, ուսումնարանը ոչ մեկի անունով չէր կոչվում: Միտք ծագեց` իսկ ինչո՞ւ չկոչել նրանց անունով, ովքեր այս հողի համար արյուն են թափել: Նրանցից մեկն էլ իմ ընկեր Վլադիկ Խաչատրյանն է` իմ մանկական և մարտական ընկերը, ով եղել է Ավոյի զինակիցը, ամենավստահելի մարդկանցից մեկը, ավարտել այս ուսումնարանը»,- շարունակեց պատմել Ս. Հայրապետյանը: Արդեն պարզ էր, Վ. Խաչատրյանի անվան ուսումնարանում ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա է, և մրցություններում առաջին տեղ գրավելու տնօրենի ակնկալիքները հիմք ունեն:

Շարունակենք շրջայցը: Տրակտորիստների խմբում ենք, 11-րդ դասարանում, այսինքն` 2-րդ կուրսում: Փորձեցինք տղաներից պարզել, թե ինչու են ընտրել այդ մասնագիտությունը: Հենրիկյան Հարութը` Սոս գյուղից, ասաց, որ իրենց գյուղում մեքենատրակտորային կայան կա, և տրակտորիստի պահանջ ունեն: Նա համոզված է, որ ավարտելուց հետո գյուղում աշխատանք կունենա: Նրա կուրսընկեր, համագյուղացի Հարությունյան Արմենն էլ նույն ակնկալումն ունի: Վարդանյան Վարդանը` Աշանից, ասաց, որ հայրը տրակտորիստ է, և ցանկանում է հորն օգնել, նրա գործը շարունակել: Իրենց գյուղում տրակտորներ շատ կան, և տրակտորիստի մեծ պահանջարկ կա: Այս գյուղից էլի մի քանի տղաներ են այստեղ սովորում:

Աբգարյան Վիտալիկը Գիշի գյուղից է գալիս: Գիտի, որ ՄՏԿ-ները տրակտորիստ են պահանջում: Տեղյակ է նաև կառավարության նոր որոշմանը` ով տրակտորիստի վկայական չունի, իրավունք չունի տրակտոր վարել:

Տնօրենի խոսքով` այս որոշումը մեծապես նպաստել է, որպեսզի ուսումնարանում տրակտորիստի մասնագիտությամբ սովորողների թիվը մեծանա, և ձևավորվել է երեք խումբ:

Մեր հաջորդ այցեկետը արհեստանոցն էր, որն այստեղ լաբորատորիա են անվանում: Հիմնական աշխատանքներն այստեղ են կատարվում: Ընդարձակ սրահ է, որտեղ տեղադրված են տարբեր սարքավորումներ, տրակտոր, կոմբայնի մասեր, մեխանիզատորական այլ պարագաներ: Տնօրենի խոսքով` մի քանի տարի առաջ շենքն ահավոր վիճակում էր: Դիմել են կառավարությանը, և 36 մլն դրամ է հատկացրել վերանորոգմանը: «Եթե 1-2 տարի էլ ուշանար, 200 մլն-ով էլ չէինք կարողանա վերանորոգել, որովհետև ամբողջ տեխնիկան դրա տակ է և փչանում էր առանց ծածկի»: 2-րդ և 3-րդ կուրսերի տրակտորիստները վարպետներ Մարտիկ Շամխալյանի և Օլեգ Դանիելյանի վերահսկողությամբ գործնական աշխատանք էին կատարում մեխանիզատորական տարբեր սարքավորումների ու անվավոր տրակտորի վրա:



Ուսումնարանում տրակտորիստներից բացի գործում են տարբեր խմբեր` ավտովարորդների, կար ու ձևի, վարսահարդարների, էլեկտրազոդողների, հյուսն-ատաղձագործների, համակարգչային տեխնիկայի սպասարկման, խոհարարների և այլն, բայց ամենամեծ շեշտը դրվում է տրակտորիստների պատրաստման վրա` հաշվի առնելով, որ ագրարային երկիր ենք, տրակտորիստներ, կոմբայնավարներ, մեխանիզատորներ շատ են հարկավոր: Բայց մի մեծ խնդրի առաջ են կանգնած: «Մենք պատրաստում ենք տրակտորիստներ, բայց գյուղնախարարությանը կից գործող հանձնաժողովն է համապատասխան վկայական տալիս քննություն ընդունելուց հետո, երբ նրանք դառնում են 18 տարեկան: Իսկ ուսումնարանն ավարտում են 17 տարեկանում: Փաստորեն նրանք բանակ են զորակոչվում առանց վկայական ստանալու: Այնինչ, տրակտորիստի վկայական ունենալով` բանակում կարող են վարել տանկ, զրահափոխադրիչ և ուսումնարանում սովորածը չմոռանալ ու ծառայությունն ավարտելուց հետո հմտացած` տրակտորիստ աշխատել: Սակայն գործող կարգով այդ արտոնությունը չունեն:

Ավտովարորդների պարագայում ուրիշ է. նրանք 17 տարեկանում քննություն են հանձնում և 18 տարեկան դառնալով` անմիջապես ստանում վկայականը ու բանակ զորակոչվելով, վարորդ աշխատում: «Ինչո՞ւ վարորդներին կարելի է` տրակտորիստներին` ոչ»,- հարցնում է Ս. Հայրապետյանը: Նա հարցը բարձրացրել է մի քանի ատյաններում` առաջարկելով փոփոխություն կատարել օրենքում, բայց այն լուծում դեռ չի ստացել:

Շարունակում ենք էքսկուրսը ուսումնարանում: Վարսահարդարների խմբում ենք: Բոլորն աղջիկներ են: Կարելի է ասել, գործնական աշխատանք էր: Վարպետը սովորողներից մեկի վերջին վարսահարդարումն էր կատարում, որը պատրաստվում էր ծննդյան տարեդարձի գնալ: Այդ ծառայության պահանջը կա նաև գյուղերում: Դա հաստատեցին այստեղ սովորող բերդաշենցի երեք աղջիկները, որոնք ասացին, որ գյուղում զգացվում է գեղեցկության սրահի կարիք, գյուղի աղջիկներն էլ են ուզում ծննդյան և տոնական միջոցառումներին գեղեցիկ հարդարված մազերով ներկայանալ ու որպեսզի ամեն անգամ դրա համար չգնան շրջկենտրոն կամ Ստեփանակերտ, իրենք սովորում են, որ սպասարկեն իրենց գյուղացիներին: Ասենք, հիմա էլ են արդեն փող աշխատում` տանը հաճախորդներ ընդունելով:

Հյուսն-ատաղձագործների արհեստանոցում նույնպես գործը եռում էր: Տնօրենը հպարտությամբ նշեց, որ ուսումնարանի ուսուցիչների սեղանները, աթոռները, համակարգչային սեղաններն իրենց սովորողների ձեռքի գործն է: Իրոք , դրանք իրենց տեսքով չէին տարբերվում մայրաքաղաքում ձեռք բերված գույքից: Այսպես բավականին էժան է նստում: Նրանք կարող են նաև ուրիշ հաստատությունների, մանկապարտեզների գույքը պատրաստել, եթե, իհարկե, պատվիրեն, հաշվարկել են, այդպես կիսով չափ էժան է նստում: Ե՛վ իրենք օգուտ կանեն, և՛ տվյալ կազմակերպությունը:

Դերձակների խմբում դրված կարի մեքենաների թիվը վկայում էր կատարվող գործերի մասին: Այստեղ էլ կարող են ծառայություն մատուցել: Օրինակ` իրենց ավտոբուսների նստատեղերի ծածկոցներն իրենք են կարել:

Ուսումնարանից հեռացանք լավ տպավորություններով, լիցքավորված երիտասարդ տղաների ու աղջիկների պատասխանից, որոնք վստահ ասացին, որ իրենց օրվա հացը կարող են վաստակել իրենց մասնագիտությամբ աշխատելով ու գյուղում ապրելով:

Ժամանակին բոլոր գյուղերն իրենց արհեստավորներն ունեին: Մարտունու արհեստագործականը լծված է հին ու բարի ավանդույթները վերականգնելու գործին:

**Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## ԴԻՄՈՐԴ-2014

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2013 թ. N 970-Ն

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2014-2015 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Հավելված*
*Լեռնային Ղարաբաղի*
*Հանրապետության կառավարության*
*«28» դեկտեմբերի 2013 թվականի*
*N 970-Ն որոշման*

# Ց Ա Ն Կ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### *I. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### 1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

#### 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած կափր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| -010300 | Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ | Մ(գ) | Ֆ(գ)** կամ Անգլ(գ)** | | Հլգ(գ)* |
| 010400 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ)** կամ Անգլ(գ)** | | Հլգ(գ)* |
| -010600 | Ֆիզիկա | Ֆ(գ) կամ Մ(գ) | Մ(գ)** կամ Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| -020100 | Քիմիա | Ք(գ) | Կ(գ)** կամ Մ(գ)** | | Հլգ(գ)* |
| 020200 | Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ)** կամ Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 020400 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* |
| 021000 | Դեղագործական քիմիա | Ք(գ) | Կ(գ)** կամ Մ(գ)** | | Հլգ(գ)* |
| 030200 | Քաղաքագիտություն | ՀժՊ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 030300 | Հոգեբանություն | Կ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 030400 | Պատմություն | ՀժՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ (գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | | Օտլ(գ)* |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 032100 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | Մասն. | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | ՆԶՊ (բ) | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 050800 | Կերպարվեստ և գծագրություն | Գծն | Գն | | Հլգ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 080300 | Ֆինանսներ | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 081300 | Կառավարման տեղեկատվական համակարգեր | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 081500 | Հաշվապահական հաշվառում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 130100 | Օգտակար հանածոների հետախուզում և մշակում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 140200 | Էլեկտրաէներգետիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 210400 | Հեռահաղորդակցություն | Ֆ (գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* |
| 270100 | Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |

• - Նշված մասնագիտություններով ԱրՊՀ առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

#### 1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած կափր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 010300 | Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ | Մ(գ) | Ֆ(գ)** կամ Անգլ(գ)** | | Հլգ(գ)* |
| 010600 | Ֆիզիկա | Ֆ(գ) կամ Մ(գ) | Մ(գ)** կամ Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 020100 020200 | Քիմիա, Կենսաբանություն | Ք(գ) | Կ(գ)** կամ Մ(գ)** | | Հլգ(գ)* |
| 020400 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* |
| 030400 | Պատմություն | ՀժՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ (գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ (գ) | |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | ՆԶՊ (բ) | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 051000 | Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ (գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ) ** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 140200 | Էլեկտրաէներգետիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 190200 | Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |

### 2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

#### 2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| -310102 | Ագրոնոմիա (լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով) | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| -310201 | Անասնաբուծություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| -310302 | Անասնաբուժություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| -310506 | Ագրոէկոլոգիա | Մ(գ) կամ Կ(գ) | Ֆ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| -310801 | Գյուղատնտեսության մեքենայացում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 310901 | Հողաշինարարություն և հողային կադաստր | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311103 | Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311112 | Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |

# ԴԻՄՈՐԴ-2014

## 2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| •310102 | Ագրոնոմիա (լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով) | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| •310201 | Անասնաբուծություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| •310301 | Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն | Մ(գ) կամ Կ(գ) | Կ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| •310506 | Ագրոէկոլոգիա | Մ(գ) կամ Կ(գ) | Ֆ(գ)** կամ Ք(գ)** | | Հլգ(գ)* |
| •310801 | Գյուղատնտեսության մեքենայացում | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 310901 | Հողաշինարարություն և հողային կադաստր | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311103 | Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 311112 | Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |

• - Նշված մասնագիտություններով ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, որպես մրցութային առարկաների գնահատական, դիմորդը կարող է դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում տարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

## 2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած-կագիր | Մասնագիտության անվանումը |
|---|---|
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0602 | Մենեջմենթ (Կառավարում) (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0603 | Ֆինանսներ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2401 | Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 3101 | Հողաշինարարություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 3102 | Գյուղատնտեսագիտություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 3103 | Անասնաբուծություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 3104 | Անասնաբուժություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 3106 | Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 3204 | Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |

## 2.4 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած-կագիր | Մասնագիտության անվանումը |
|---|---|
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (միջնակարգ կրթությամբ) |
| 0602 | Մենեջմենթ (Կառավարում) (միջնակարգ կրթությամբ) |
| 0603 | Ֆինանսներ (միջնակարգ կրթությամբ) |
| 2401 | Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (միջնակարգ կրթությամբ) |
| 3101 | Հողաշինարարություն (միջնակարգ կրթությամբ) |
| 3102 | Գյուղատնտեսագիտություն (միջնակարգ կրթությամբ) |
| 3103 | Անասնաբուծություն (միջնակարգ կրթությամբ) |
| 3106 | Գյուղատնտեսության մեքենայացում (միջնակարգ կրթությամբ) |
| 3204 | Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում (միջնակարգ կրթությամբ) |

# II. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած կագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀժՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | | Օտլ(գ)* |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն*** | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն*** | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | ՆԶՊ (բ) | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Հլգ(գ) | Մ(գ) | Օտլ (գ) | |

### 1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած կագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀժՊ(գ) | ԸՊ (գ) կամ Օտլ (գ) | Հլգ (գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ(գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | | Օտլ(գ)* |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն *** | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | ՆԶՊ (բ) | ԸՖՊ | | Հլգ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Հլգ(գ) | Մ(գ) | Օտլ (գ) | |

### 1.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած-կագիր | Մասնագիտության անվանումը |
|---|---|
| 0207 | Թարգմանություն և գործավարություն (հիմնական կրթությամբ) |
| 0302 | Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ) |
| 0303 | Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ) |
| 0307 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ) |
| 0312 | Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ) |
| 0313 | Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ) |
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (հիմնական կրթությամբ) |
| 0602 | Մենեջմենթ (կառավարում) (հիմնական կրթությամբ) |
| 0603 | Ֆինանսներ (հիմնական կրթությամբ) |
| 2203 | Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրավորում (հիմնական կրթությամբ) |
| 2307 | Ձբոսաշրջություն (հիմնական կրթությամբ) |
| 0416 | Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |

## 2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### 2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած կագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննություններ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային քննություններ | | | Ոչ մրցութային քննություններ |
| 030400 | Պատմություն | ՀժՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ (գ) | Հլգ(գ) | |
| 030500 | Իրավագիտություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ (գ) | |
| 030600 | Լրագրություն | ՍԱ(գ) | Հլգ(գ) | | Օտլ(գ)* |
| 030700 | Միջազգային հարաբերություններ*** | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | Օտլ (գ) | |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(գ) | ՀժՊ(գ) | | Օտլ(գ)* |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 032300 | Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ | Անգլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլ(գ) | Հլգ(գ) | | ՀժՊ(գ)* |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | |
| 080200 | Կառավարում | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ (գ) | |
| 230100 | Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |
| 230200 | Տեղեկատվական համակարգեր (ըստ ճյուղերի) | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* |

## ԴԻՄՈՐԴ-2014

### 6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտությունը |
|---|---|
| 1002 | Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում (հիմնական կրթությամբ) |
| 1207 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ) |
| 2203 | Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ) |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (հիմնական կրթությամբ) |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում ( տրակտորիստ) (հիմնական կրթությամբ) |
| 2907 | Ատաղձագործություն, մանրահատակագործություն (հիմնական կրթությամբ) |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ) |

### 7. ՇՈՒՇԻԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիր | Մասնագիտությունը |
|---|---|
| 1006 | Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (կաթսաների մեքենավար, կաթսայատան օպերատոր, կաթսայատներ սպասարկող փականագործ, ջերմային ցանցեր սպասարկող փականագործ, կաթսայատների սարքավորումներ նորոգող փականագործ, ջերմային ցանցերի սարքավորումներ նորոգող փականագործ) (հիմնական կրթությամբ) |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող-սալիկապատող, սինթետիկ նյութերով երեսպատող, երեսպատող-մարմարագործ, խճանկարիչ, ծեփագործ, ներկարար) (հիմնական կրթությամբ) |
| 2912 | Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ (սանիտարատեխնիկական համակարգերի և սարքավորումների մոնտաժող, օդափոխման և պնևմատրանսպորտի մոնտաժում, սանիտարատեխնիկական համակարգերի հանգույցների և դետալների փականագործ, փականագործ-սանտեխնիկ) (հիմնական կրթությամբ) |

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

---

*Գրանցված է*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*արդարադատության նախարարության*
*կողմից*
*2013 թվականի դեկտեմբերի 20-ին*
*պետական գրանցման համարը` 10513153*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*արդարադատության նախարար``*
*Ա. Դանիելյան*

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

## Հ Ր Ա Մ Ա Ն

«9» դեկտեմբերի 2013թ. N 241-Ն

ք. Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 62-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ``

1. ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 23-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը, ատեստավորման թերթի ձևը, որակավորման տարակարգի բնութագրիչները և որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկերը սահմանելու մասին» N 62-Ն հրամանով հաստատված հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը` սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն` պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ` Ս. ԱՍՐՅԱՆ**

*Հավելված*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 241-Ն հրամանի*

*Հավելված 3*
*ԼՂՀ կրթության և գիտության նախարարի*
*2012 թվականի ապրիլի 23-ի N 62-Ն հրամանի*

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

### I. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված բնութագրիչներից առնվազն 2-ը, բացառությամբ 6-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերով սահմանված բնութագրիչները միաժամանակ ապահովելու դեպքերի:

2. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երկրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի երկրորդ գլխում նշված չափանիշներից առնվազն 4-ը ապահովելու դեպքում:

3. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման երրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի երկրորդ գլխում նշված չափանիշներից առնվազն 6-ը ապահովելու դեպքում:

4. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման չորրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն հավելվածի երկրորդ գլխում նշված բոլոր չափանիշներն ապահովելու դեպքում:

5. Որակավորման տարակարգի շնորհման և դրա բարձրացման համար ուսուցիչը կարող է դիմել հետևյալ համաչափությամբ.

1) երկրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար` առաջին աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն երկու տարի հետո.

2) երրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար` երկրորդ աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն երեք տարի հետո.

3) չորրորդ աստիճանի որակավորման տարակարգ ստանալու համար` երրորդ աստիճանի տարակարգ ստանալուց առնվազն չորս տարի հետո:

### II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

6. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչներն են`

1) ուսուցչի վարպետության մակարդակը,

2) դասագրքերի գնահատող հանձնաժողովում ընդգրկվածությունը,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված կազմակերպությունում վերապատրաստման դասընթացի վարումը,

4) վերջին երկու տարվա ընթացքում «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում առնվազն մեկ մասնագիտական թեմայի վարում կամ ուսուցիչների վերապատրաստման առնվազն մեկ հեռավար ուսուցման դասընթացի վարումը,

5) վերջին երեք տարվա ընթացքում`

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից կամ միջազգայնորեն ճանաչված ամսագրերում հրատարակված (կամ վերահիրատարակված) առնվազն մեկ գիտական կամ մանկավարժական հոդված կամ`

բ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված դասագրքի կամ ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկի կամ ուսումնաօժանդակ նյութի կամ գիտամանկավարժական աշխատության հեղինակ կամ համահեղինակ,

6) վերջին 3 տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության տեսչավորումների կամ արտաքին գնահատման արդյունքում արձանագրած լավագույն ցուցանիշները

7) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պետական պարգևների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և «Հայաստանի Հանրապետության Պետական պարգևների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն կոչում, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ շքանշաններ և մեդալներ ունեցող կամ

ա. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պատվավոր կոչումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և «Հայաստանի Հանրապետության Պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված` «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վաստակավոր մանկավարժի» և «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի», ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ և ԱդրԽՍՀ գիտամանկավարժական բնագավառի պատվավոր կոչումներ ունեցող կամ

բ. վերջին 5 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի կողմից հուշամեդալներով, պատվոգրերով կամ շնորհակալագրերով պարգևատրված կամ

գ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացված հանրապետական մրցույթներում, առարկայական հանրապետական մրցույթներում մրցանակային տեղեր զբաղեցրած:

### III. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

7. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը`

1) դիմում` ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին,

2) անձնագրի պատճենը,

3) զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու մասին ատեստավորման թերթիկի պատճենը

4) կրթության վերաբերյալ փաստաթղթի (դիպլոմ) պատճենը,

5) աշխատանքային գրքույկի պատճենը,

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաստատված ձևին համապատասխան` դպրոցի տնօրինության կողմից տրված տեղեկանք` ուսուցչի վարպետության առնվազն «լավ» մակարդակի մասին,

7) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության տեսչավորման կամ արտաքին գնահատման արդյունքում տրված տեղեկանք տվյալ ուսուցչի ցուցանիշների մասին,

8) հեղինակային աշխատությունները,

8. Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների և պատճենների հետ: Բնօրինակները պատճենների հետ համեմատելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

ԳԵՂԱԴԻՏԱԿ

# ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՃԱՐԵՂ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ

Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում կազմակերպված հերթական գրական-գեղարվեստական միջոցառումը նվիրված էր միջնադարյան հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն (կազմակերպիչ՝ Սուսաննա Ստեփանյան): Միջոցառումը կազմակերպվել էր «Պատանի ընթերցասեր» խմբակի անդամների մասնակցությամբ: Մթնոլորտը տրամադրող էր, լսարանը՝ գեղեցիկ կահավորված: Աչք էր շոյում հատկապես պատի թերթը, որը վարպետորեն ձևավորել էր նկարչության շնորհաշատ ուսուցիչ Պետրոս Դանիելյանը: Հմուտ ձեռքով վրձնած խոսուն նկարը ներկաներին համակեց յուրօրինակ զգացումներով: Միջոցառման մասնակիցները մտովի տեղափոխվեցին պատմական Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկը՝ ծիծաղախիտ Վանա ծով, անմիջապես ծովափին՝ հանրահայտ Նարեկավանքը: Վանքի պատկառելի հայացքի ներքո մեծ աղոթասացն է՝ ստեղծագործելու պահին: Հետաքրքիր պատի թերթ էին ձևավորել նաև «Պատանի ընթերցասեր» խմբակի արվեստասեր աշակերտները: Միջոցառման կազմակերպիչ Ս. Ստեփանյանը բացման խոսք ասաց.



- Գրիգոր Նարեկացին հայ ազգային իրականության ու գրականության ծնունդ է: Նրա հանճարը նախապատրաստվել է երկար ու ձիգ դարերի ընթացքում, հազարամյա հայ բանահյուսության և մեսրոպաշունչ գրականության շքեղ հիմքի վրա: Նա կրում է հայոց լեզվի և հայ գեղարվեստական մտքի ամբողջ ճոխությունը, հայ ժողովրդի մտածողության, բնավորության, հոգու և ոգու բարձր հատկանիշները:

Ապա միջոցառման մասնակից աշակերտները սիրով ներկայացրին Նարեկացու՝ մեզ հասած համառոտ կենսագրական տեղեկություններ և գեղեցիկ արտասանեցին նրա լավագույն տաղերից (հիշենք, որ մեզ են հասել Նարեկացու տաղերից 41-ը) մի քանիսը: Ներկաները ըմբոշխնեցին մեծագույն բանաստեղծի փայլուն տաղերը, զմայլվեցին բողբոջախիտ խիտասաղարթ ծառերի ակնահաճո, քաղցրունակ պտուղների գույներով: Այնպիսի տպավորություն էր, ասես նրանց առաջ ամբողջ հասակով մեկ կանգնել էր աշխարհի գեղեցկություններով հիացած մեծ արվեստագետը: Ծանոթանալով հանճարեղ Նարեկացու անկրկնելի բանաստեղծական արվեստին՝ աշակերտները մեկ անգամ ևս համոզվեցին, որ, իրոք, եթե Նարեկացին նկարիչ լիներ և նկարեր այնպես, ինչպես նկարագրում է, ապա անկասկած, կստացվեր Վերածննդի շրջանի հայտնի գեղանկարիչ Ռաֆայելի վրձնին արժանի մի գործ:

Բնականաբար, հատվածներ լսեցինք նաև հանրահռչակ «Մատյան ողբերգության» պոեմից, որտեղ հեղինակն ամբողջական կենդանի պատկերներով նկարագրում է Վերածնության դարաշրջանի մարդու հոգու, խոհերի և զգացմունքների հարուստ ու բազմազան աշխարհը:

Վերջում միջոցառման մասնակիցները դիտեցին տեսանյութ՝ նվիրված Նարեկացու կենսագրությանը՝ լի ալեկոծություններով ու ցնցումներով: Աշակերտների հետաքրքրությունը շարժեցին հատկապես ժողովրդական ծագում ունեցող հրաշապատում լեգենդները՝ կապված այն դեպքի հետ, երբ լարված հոգևորականությունը ամենազոր Սուրբ Նարեկացուն անհիմն մեղադրել է հերձվածողության մեջ:

Նարեկացին քայլող լեգենդ է: Նրա ստեղծագործություններն այսօր էլ արդիական են ու մնայուն: Նա ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության անկրկնելի մեծություններից է:

Այս և նման միջոցառումները միտված են խորացնելու աշակերտների գիտելիքները, ընդլայնելու նրանց աշխարհաճանաչողությունը և վերստին արժևորելու մեր մեծերի հոգևոր ժառանգությունը:

**Ռիմա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**
**Ստեփ. հ. 6 հիմն. դպրոցի**
**հ. լեզվի եւ գրականության մեթոդ-միավորման նախագահ**

*Շնորհավորանք*

# ՍՐՏԱԲՈՒԽ ԽՈՍՔ



Լրացավ պարզապես լավ մարդ, բարի խորհրդատու, հոգատար մայր, նվիրված ու շատ սիրված կին, կոլեկտիվում մեծ հարգանք ու սեր վայելող, հարգված ու մեծարված ուսուցչուհի Գայանե Բաղդասարյանի ծննդյան 50 տարին:

Ուսուցիչ, որն իր կյանքի 29 տարին անմնացորդ նվիրել է դպրոցին ու իր սաներին, ում յուրաքանչյուր խոսք մի կյանք է, յուրաքանչյուր դաս՝ մի պատմություն:

Գ. Բաղդասարյանը մարդկային վեհ ու վսեմ արժանիքներով օժտված անհատ է: Նա մարդկային հոգու նրբին լարերի թարգմանն է, զգում է յուրաքանչյուրի հոգին, ցավում ամեն վերքի համար, իր ծանրակշիռ խորհուրդներով սփոփում ու դարմանում յուրաքանչյուրին: Գ. Բաղդասարյանի հետ զրուցելն անգամ մեծագույն հաճույք է, պարզապես մտորում ես, թե որտեղի՞ց այսքան իմաստնություն այս զարմանահրաշ կնոջ մեջ: Նա լավ ընկեր է. ճշմարիտ ընկերը ճանաչվում է ոչ միայն դժբախտության, այլ նաև ուրախության մեջ, քանզի ոչ բոլորն են ունակ անկեղծ ուրախանալու ուրիշի, դիմացինի հաջողություններով: Մտորում ես՝ ինչ կլիներ, եթե շրջապատիդ մարդկանցից շատերը նման լինեին մեր Գայանեին՝ միմյանց նկատմամբ հոգատար, վշտին կարեկից, միմյանց ուրախությունն ու ցավը հոգով կիսող: Հմուտ ու փորձառու ուսուցչուհին այն եզակի մարդկանցից է, որոնք կարծես ծնված են այդպիսին լինելու: Եվ հենց ինքն էլ իր օրինակելի պահվածքով ու կեցվածքով ջերմություն ու լույս է տարածում կոլեկտիվում:

Ծնվել է 1963թ., Ստեփանակերտ քաղաքում: 1970-80թթ. սովորել է հ. 8 միջնակարգ դպրոցում: 1980-ին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ավարտելով ինստիտուտը՝ 1984-1989թթ. աշխատել է Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1989թ. սեպտեմբերի մեկից առայսօր նա աշխատում է ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղում՝ որպես պատմության ուսուցչուհի: Նա իր սաներին հորդորում է լինել արդար, ընկերասեր, հայրենասեր, ազնիվ ու ճշտապահ: Օժտված է բարձր գիտակցական կարգապահությամբ, պարտքի ու պատասխանատվության զգացումով:

Սիրելի՛ Գայանե, ֆիզմաթ դպրոցի մանկավարժական կոլեկտիվն ի սրտե շնորհավորում է քո ծննդյան տարեդարձը, մաղթում առողջություն, հոգու խաղաղություն, երկար տարիների կյանք, ամենայն բարիք:

*Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի*
*մանկավարժական կոլեկտիվ*

# ՔԱՆԻ ԼԵԶՈՒ ԳԻՏԵՍ, ԱՅՆՔԱՆ ՄԱՐԴ ԵՍ

*Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում:*

**Ավ. Իսահակյան**

Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները սիրում են անգլերենը: Եվ զարմանալի չէ, որովհետև անգլերենի ուսուցչուհի Իրինա Միրզոյանը յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ հմտորեն անհատական մոտեցում է ցուցաբերում: Այստեղից էլ ծնվում է աշակերտների ակտիվությունը դասերին, նրանց մեծ ցանկությունը՝ լսել, խոսել և կարդալ անգլերեն: Աշակերտները մեծ ուրախությամբ են հաճախում անգլերենի դասասենյակ, որը լավագույններից մեկն է, և այնտեղ միմյանց հետ շփվում են անգլերեն լեզվով: Առհասարակ, անգլերեն խոսքը հնչում է ոչ միայն դասաժամերին, այլև դասամիջոցներին:

Ուզում ենք ընթերցողների հետ կիսվել Իրինա Միրզոյանի՝ 11-րդ դասարանում կազմակերպած համաքաղաքային դասից ստացած տպավորություններով: Դասի թեման էր՝ «Գրքերը մեր կյանքում» («Books in our life»), որին աշակերտները պատրաստվել էին մեծ պատասխանատվությամբ: Դասարանի պատերին փակցված էին հայտնի գրողների՝ Վիլյամ Սարոյանի, Էռնեստ Հեմինգուեյի, Վիլյամ Շեքսպիրի ասույթները:

Դասը սկսվեց ուսուցչուհու այն հարցադրումներով, թե ինչ դեր է խաղում գիրքը նրանց կյանքում, ինչ գրքեր են կարդացել, և թե ինչ գրական տարրերից են բաղկացած գեղարվեստական ստեղծագործությունները: Աշակերտները համակարգչային շարժա-նկարների օգնությամբ անվանում էին անգլիացի, ամերիկացի հայտնի գրողների անունները: Նրանք առանց դժվարության պատասխանում էին ուսուցչուհու հարցերին:

Գրատախտակին նախօրոք գրված էին առանցքային բառերն ու արտահայտությունները, տրամագրերը (դիագրամ), որոնք ամբողջ դասապրոցեսում ծառայել են որպես դիտողական պարագաներ:

Ուսուցչուհու օգնությամբ անց է կացվել հետաքրքիր խմբային աշխատանք՝ ըստ աղյուսակների, որի նպատակն էր զարգացնել սովորողների բանավոր խոսքը:

Աշակերտներն ակտիվորեն պատասխանեցին ուսուցչուհու հարցերին՝ օգտագործելով շատ դարձվածքներ «book» բառով և բանավոր ներկայացրին ամերիկացի, անգլիացի և հայ հայտնի գրողների ասույթները: Նրանցից երկուսին հանձնարարվեց երկխոսության թեմա, որը միտված էր սովորողների բանավոր խոսքի զարգացմանը:

Բառային աշխատանքից հետո ուսուցչուհին անցավ հետևյալ թեմաների վերլուծությանը:

To give reasons to the following statements:

1. Reading plays a significant role in our life.
2. The ability to read write is more important today than in the past.
3. People should read only those books that are about real events, people and established facts.
4. Reading fiction is more enjoyable than watching movies.

Աշակերտները հաջորդաբար պատմեցին հանձնարարված թեման:

Ուսուցչուհու կողմից ընթերցվող տեքստն (ամերիկյան հայտնի գրող Մարգարետ Միտչելի մասին) ունկնդրելուց հետո ստուգվեց աշակերտների կողմից տեքստի ճիշտ ընկալումը հարցերի միջոցով: Որից հետո նրանք պատմեցին Մ. Միտչելի «Քամուց քշվածները» պատմավեպից հատվածներ: Կատարվեցին հնչյունաբանական վերլուծություններ, գրատախտակին գրի առան վերոնշյալ բառերի հոմանիշները և բացատրեցին դրանց իմաստները:

Զարմանալին այն է, որ դասապրոցեսի ընթացքում ուսուցչուհուն հաջողվել է մեծ ուշադրություն հատկացնել քերականությանը: Քարտերի օգնությամբ բացատրեցին աղյուսակում տրված շաղկապների իմաստները: Հերթականությամբ ընթերցեցին վերոնշյալ պատմավեպից հատվածներ՝ տեղադրելով համապատասխան շաղկապները: Այնուհետև անցան բառակազմության վերաբերյալ վարժությունների կատարմանը, որին աշակերտները ծանոթ էին նախորդ դասից, ինչը նշանակում է, որ սովորողները հասկանալով են կատարել վարժությունը՝ իմանալով յուրաքանչյուր նախածանցի և վերջածանցի իմաստը:

Դասի վերջում նրանք գնահատվեցին: Հանձնարարվեց թեմային համապատասխան տնային աշխատանք:

Քանի որ հ. 8 դպրոցում նոյեմբերը հայտարարված էր անգլերենի ամիս, անգամ դասամիջոցին աշակերտները անգլերեն և ռուսերեն կարդացին անգլիացի հայտնի բանաստեղծ Ռոբերտ Բյոռնսի բանաստեղծություններից, հնչեցրին երաժշտություն և ներկայացրին շոտլանդական պար:

Մի խոսքով, բավականին հետաքրքիր, հագեցած և անմոռանալի դաս էր, որտեղ լսվում էր միայն անգլերեն լեզուն:

Այս դասը դարձավ ուսուցչուհի Իրինա Միրզոյանի փորձի փոխանակումն իր գործընկերների, երիտասարդ ուսուցիչների և օտար լեզուների ֆակուլտետի ուսանողների համար:

Ներկաները մեծ բավականություն ստացան բարձր մակարդակով կազմակերպված նման համաքաղաքային դասից և իրենց գոհունակությունը հայտնեցին ուսուցչուհուն:

**Լիանա ՆԵՐՍԵՍՅԱՆ**
**Ստեփ. Ա. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոցի**
**ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի տեղակալ**

# ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԸ ՀԵՏԱՔՐՔԻՐ Է



Շուրջ երեսուն տարվա մանկավարժական աշխատանքի վաստակ ունի Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի Ք. Քոքսի անվան միջնակարգ դպրոցի դասվար Իրինա Ասրյանը:

Ծնվել է 1963թ. դեկտեմբերի 22-ին, շրջանի Չափար գյուղում: 1984թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի տարրական կրթության և մեթոդիկայի բաժինը և նույն տարին աշխատանքի անցել հարևան Վերին Հոռաթաղի դպրոցում՝ որպես դասվար:

Աշխատելու տարիներին Իրինա Ասրյանը իրեն դրսևորել է որպես գրագետ, եռանդուն, աշխատասեր, գործին նվիրված ու հմուտ մանկավարժ: Նրա դասավանդած աշակերտներն առանձնանում են դպրոցում իրենց գիտելիքներով, պահվածքով, խոսքի կուլտուրայով: Նրանք ազատ ու անկաշկանդ են իրենց վերաբերմունքով, ակտիվությամբ, ստեղծագործական կարողություններով ու քննադատական մտածողությամբ, ու այդ ամենը՝ իրենց ուսուցչուհու մանկավարժական վարպետության շնորհիվ:

Նա ոգևորվում է յուրաքանչյուր երեխայի հաջողություններով, մտահոգվում հետ մնացողներով, խորհրդակցում ծնողների հետ, ուղիներ փնտրում, լրացուցիչ պարապմունքներ անցկացնում նրանց հետ՝ առաջավորներին հասցնելու համար:

Իրինա Ասրյանը դասավանդում է նոր մեթոդներով, ինքն ունի իր սեփական մեթոդները, գերադասում է դասերին կիրառել խաղային գործունեության ձևեր, որոնք ավելի հետաքրքիր ու արդյունավետ են դարձնում մանավանդ դասի իմաստի ընկալման փուլը:

Ուսուցչուհին աշակերտների մոտ կարողանում է զարգացնել ցանկացած անծանոթ տեքստը կարդալու, կարդացածը պատմելու, սեփական կարծիք հայտնելու, մեկնաբանություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Վաստակաշատ ուսուցչուհին երկար տարիներ ղեկավարում է դպրոցի տարրական դասարանների ուսուցիչների մեթոդխորհուրդը, իր գիտելիքներով կարողանում է օգտակար լինել սկսնակ ուսուցիչներին, որոնք հաճախ են դիմում նրա օգնությանը:

Դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները շնորհավորում են սիրված ուսուցչուհու կեսդարյա հոբելյանը, մաղթում բազում հաջողություններ աշխատանքում, անձնական կյանքում՝ երկու որդիների և թոռների հետ:

*Վերին Հոռաթաղի Ք. Քոքսի անվան միջնակարգ*
*դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

ԿԱՃԱՌ

# ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀՀ ԳԱԱ-ն բոլորեց գոյության յոթերորդ տասնամյակը: Յոթանասուն տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնը դժվարին, սակայն բովանդակաշատ ուղի է անցել, վիթխարի գիտական նվաճումներ ձեռք բերել, արժանացել համաշխարհային ճանաչման:

Հայ ժողովուրդը դարեր ի վեր առանձնահատուկ հոգածություն ու ակնածանք է տածել գիտության և մշակույթի հանդեպ, որոնք դարձել են ոչ միայն նրա առաջընթացի գրավականը, այլև գոյապահպանման զորեղ միջոց:

1935թ. Երևանում բացվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը ղեկավարում էր անվանի երկրաբան, ակադեմիկոս Ֆ.Յու. Լևինսոն-Լեսինգը: 1938թ. Արմֆանի նախագահ ընտրվեց տաղանդաշատ արևելագետ, հայագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծմամբ իսկապես նոր փայլուն էջ բացվեց հայոց գիտության զարգացման պատմության մեջ: Դա սկիզբն էր մեծ ճանապարհի, որով պիտի անցնեին տաղանդաշատ գիտնականների սերունդներ: Ոչ միայն անցնեին, այլ նաև փառքով պսակեին իրենց և իրենց ծնող ժողովրդի անունը:

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը հայագիտական ուսումնասիրություններից զատ զբաղվում էր ֆիզիկամաթեմատիկական, երկրաբանական, տեխնիկական, բնական գիտությունների այլ ճյուղերով: ՀԽՍՀ կառավարության որոշմամբ 1943թ. նոյեմբերին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նրա հիմնադիր կազմում ընդգրկվեցին գիտության տարբեր բնագավառների 23 անվանի գիտնականներ, իսկ գիտության նորաստեղծ կաճառի պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հ. Օրբելին: Նա միաժամանակ աշխարհահռչակ թանգարան Էրմիտաժի տնօրենն էր և 1947թ. ազատվեց պրեզիդենտի պաշտոնից, վերադարձավ Լենինգրադ՝ զբաղվելու թանգարանագիտությամբ:

Ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց դեռևս չորրորդ տասնյակը չբոլորած, սակայն համաշխարհային համբավի արժանացած, կազմակերպական մեծ ունակությունների տեր Վիկտոր Համբարձումյանը: Այս ընտրությունը Հայաստանում գիտության զարգացման համար ունեցավ վճռորոշ նշանակություն. ՀԳԱ-ն թևակոխեց զարգացման նոր փուլ:

Ակադեմիայի հիմնադրման պահին հասարակական գիտությունները ներկայացված էին Պատմության, Լեզվի, Գրականության ինստիտուտներով: Հայագիտության բոլոր ճյուղերով և պատմական բոլոր դարաշրջաններով մասնագիտական լայնածավալ ուսումնասիրություններ կատարելուն նպաստելու նպատակով ստեղծվեցին Արվեստի, Արևելագիտության, Տնտեսագիտության, Փիլիսոփայության և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները: Հայաստանը, իրավամբ, դարձավ հայագիտության էպիկենտրոն:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակաշրջանում Հայաստանի գիտությունների ակադեմիան կայացավ, ունեցավ ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնեց Խորհրդային Միության հանրապետությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձավ արտասահմանում: ՀԳԱ պրեզիդենտն ընտրվեց գիտական կազմակերպությունների համաշխարհային խորհրդի նախագահ, իսկ գիտական, գիտակազմակերպական և հասարակական փայլուն գործունեության համար Վ. Համբարձումյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի կոչում:

Հայ ազգն ունեցել է աշխարհահռչակ ու աշխարհաճանաչ շատ զավակներ, որոնք համաշխարհային պատմության մասն են եղել: 20-րդ դարում գիտական այրերի հաղթարշավի դրոշակակիրը մեծատաղանդ Վ. Համբարձումյանն էր, որի հռչակը համաշխարհային հանրությանը ճանաչելի է դարձնում նրան ծնած ժողովրդին:

Մի քանի տարի առաջ ՀՀ նախագահի նախաձեռնությամբ սահմանվեց Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակ, որը յուրաքանչյուր երկու տարին մեկ շնորհվում է աստղաֆիզիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում գիտական նշանակալի ձեռքբերումներ ունեցած ականավոր գիտնականներին:

1993թ. Հայաստանի ԳԱԱ նախագահ է ընտրվում ճանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ Ֆադեյ Սարգսյանը: Նախագահի պաշտոնը նա ստանձնեց բարդ՝ Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում: 1991թ. Խորհրդային Միության փլուզումը ծայրահեղ ծանր իրավիճակ ստեղծեց ինչպես տնտեսության, այնպես էլ գիտության ու մշակույթի բնագավառներում: Սկսվեց տնտեսության անկումը, խզվեցին միջպետական սերտ կապերը, դադարեց ԽՍՀՄ հանրապետությունների ակադեմիաների համագործակցությունը: Առավել խառնակ ու օրհասական էր վիճակը Հայաստանի Հանրապետությունում Ղարաբաղյան պատերազմի, շրջափակման, ավերիչ երկրաշարժի պատճառով:

2006թ. Հայաստանի ԳԱԱ նախագահ ընտրվեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը:

Գիտությունների ազգային ակադեմիայի առաջ ծառացել էին դժվարությամբ ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու, խորացնելու, գիտության զարգացման արդի մարտահրավերների ոգով ձեռնարկումներ կատարելու հիմնահարցերը: Նշված դժվարին ու բարդ խնդիրների լուծումը պահանջում էր գիտության բնագավառում իրականացնել բազմակողմանի վերափոխումներ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը:

ՀՀ ԳԱԱ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու ակադեմիայի գիտնականների առավել ակտիվ մասնակցությանը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Վերջին 5-6 տարիների ընթացքում մեծապես ակտիվացել է ակադեմիայի միջազգային համագործակցությունը:

2012թ. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներն իրականացրել են 81 դրամաշնորհային ծրագրեր: Դրամաշնորհները ոչ միայն բարելավում են կառույցի ֆինանսական վիճակը, այլև անմիջական կապ հաստատում գիտնականների միջև, նպաստում մեր գիտության՝ համաշխարհային գիտական գործընթացին ինտեգրմանը:

Խիստ կարևորվում է մայր հայրենիքի և սփյուռքահայ գիտնականների հզոր ներուժի համախմբումը, հայ գիտական միտքը ՀՀ և ԼՂՀ գիտության և տնտեսության զարգացմանն ուղղորդելը, դրանով իսկ խթանելով հայ գիտնականների համագործակցությունն ամբողջ աշխարհում: ԳԱԱ նախագահության առաջարկով 2007թ. հոկտեմբերի 31-ին որոշում ընդունվեց ստեղծել ԳԱԱ սփյուռքի բաժին, որը պետք է իրականացներ սփյուռքահայ գիտնականներին ԳԱԱ արտասահմանյան անդամներ ընտրելու կազմակերպական և ապագա համագործակցության աշխատանքներ վարելու գործընթացը: Սփյուռքի բաժինը կոորդինացնում և անմիջական կապ է հաստատում ԳԱԱ նախագահության և ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամների, համակարգի ինստիտուտների և առանձին գիտաշխատողների միջև, հետևում է բոլոր պայմանավորվածությունների կատարմանը:

2008թ. և 2010թ. ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ են ընտրվել 115 հայազգի հանրահայտ գիտնականներ՝ աշխարհի 23 երկրներից: Սփյուռքահայ գիտնականների հետ մեր գիտնականների համագործակցությունը բազմազան է և բազմաբնույթ: Նրանց օգնությամբ իրականացվում են երիտասարդ գիտական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, մեր գիտնականների մասնակցությունը միջազգային գիտակրթական ծրագրերին, կատարվում են համատեղ գիտական հետազոտություններ, արդյունքները տպագրվում են հեղինակավոր միջազգային գիտական հանդեսներում:

ՀՀ ԳԱԱ-ն միավորում է 34-ից ավելի գիտական ինստիտուտներ, հաստատություններ, ձեռնարկություններ և այլ կազմակերպություններ:

ԳԱԱ-ն հրատարակում է 13 գիտական ամսագրեր:

Իր գոյության 70 տարիների ընթացքում ակադեմիան կուտակել է գիտագործնական հսկայական փորձ, արժանացել միջազգային գիտական հանրության բարձր գնահատականին, վայելում է հարգանք և հեղինակություն: Ակադեմիայի համակարգում ձևավորվել են բազմաթիվ գիտական դպրոցներ, որոնք միշտ էլ պատվով են ներկայացրել Հայաստանը միջազգային ասպարեզում:

**Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Ֆիզմաթ գիտությունների դոկտոր պրոֆեսոր**

# ՀԱՅ ԵՐԳԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Կյանքի անթիվ խաչուղիներում լինում են անակնկալ հանդիպումներ, որոնց մասին, թվում է, երբեք չես մտածել կամ երազել, բայց հանկարծ ինքդ քեզ համար զարմանքով հայտնաբերում ես, որ դրանց երկար ես սպասել… Այդպիսին էր իմ հանդիպումը երգչուհի Լիդա Վասիլյանի հետ, ում անունն անբաժան է նախորդ դարի երկրորդ կեսի արցախյան մշակույթից՝ ներառելով երգարվեստի ու թատերարվեստի ասպարեզում 40-ամյա ստեղծագործական աշխատանքային ուղի: Տարին հոբելյանական է երգչուհու համար. պատկառելի մի տարիք՝ 80-ամյակ, որը Լիդա Վասիլյանը դիմավորում է արժանապատվորեն, ծանրաբեռ վաստակով, անքեն ու բարի, իրեն հատուկ համեստությամբ: Այդպես ցորենով ակաղձուն հասկն է ծփում ոսկևորված հասուն արտում, ու թեև ապրած կյանքի ուղիղ կեսը արցախյան բեմին է նվիրված, այսօր, կարելի է ասել, նրա վաստակը գնահատված չէ՝ ո՛չ կոչումներով, ո՛չ արտոնություններով, ավելին՝ հետպատերազմյան խառը տարիներին զրկվել է նաև բնակարանից… Արդարամիտ լինենք և համաձայնենք մեր տաղանդավոր համերկրացու, նախկին ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ Էդ. Ղազարյանցի հետ, ով 1988-ին երգչուհու մասին գրած իր հոդվածում կոչ է անում արժանին մատուցել արվեստի մարդկանց և ստեղծագործող անհատին. «Անուշադրությունը և անտարբերությունը մարդու հանդեպ, ով իր ամբողջ կյանքով կապված է արվեստի հետ, հանցավոր ու աններելի է»: Իմ ձեռքին է ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ, անսամբլի այն ժամանակվա գեղարվեստական ղեկավար Աշոտ Բաբայանի՝ երգչուհու ստեղծագործական բնութագրությունը, որտեղ կարևորելով նրա ավանդը անսամբլի կայացման գործում, նաև հրաշալի ձայնն ու կատարողական վարպետությունը, ժողովրդական երգի հայահունչ ու ինքնատիպ մատուցումը, արժանի է համարում ներկայացնելու ՀՀ վաստակավոր արտիստուհու կոչման: Սակայն ժամանակի հրամայականն այլ էր. Արցախը ներքաշվել էր չհայտարարված պատերազմի մեջ, և լինել-չլինելու հարցն էր օդում կախված դամոկլյան սրի պես: Իր արվեստակից ընկերների հետ Լիդա Վասիլյանն էլ հայ զինվորի կողքին էր և իր արվեստով ոգևորում-գոտեպնդում էր նրան: Իսկ 99-ին տեղափոխվեց Հայաստան՝ ձեռք հասցնելու իր միակ դստերը, ով իր օգնության կարիքն ուներ:

Այսօր կարո՞տը, թե՞ անցած օրերի հուշը նրան նորից բերել է Արցախ: Լայնածավալ շինհարթակ հիշեցնող Ստեփանակերտում ամեն ինչ այնպես հարազատ է՝ և՛ սիրելի քաղաքի օդն ու ջերմությունը, և՛ հին ու նոր շենքերն ու փողոցները, իսկ երբ անցորդներից ոմանք ճանաչում և զարմանքով ողջունում են, հարցուփորձ անում, հետաքրքրվում իրենով, ասես մի հրաշքով հետ է դառնում ժամանակի անիվը, և նա նորից դառնում է այն 26-ամյա գեղեցկուհին, որի կողքով հնարավոր չէր առանց շրջվելու անցնել…

Այո, ճիշտ այդ տարիքում էր՝ 1959 թվականին, երբ Հայաստանից Ղարաբաղ հրավիրված երգահան Տելեմաք Տեր-Ավետիսյանը նրան հրավիրեց աշխատելու իր նոր ստեղծած ԼՂԻՄ երգի-պարի պետական անսամբլում՝ որպես մենակատար: Ի դեմս երգչուհու՝ հայ ժողովրդական ու աշուղական երգը արցախյան բեմում գտավ իր շնորհալի և ինքնատիպ մեկնաբանին: «Լուսին, ով լուսին» ժողովրդական երգը նրա կատարմամբ այնքան սիրվեց հանդիսատեսի կողմից, որ շատ շուտով դարձավ նրա այցեքարտը և եթե որևէ համերգի ժամանակ այն դուրս մնար ծրագրից, ապա հանդիսատեսի պահանջով անպայման հնչում էր: Սայաթ-Նովա, Ջիվանի, Աշոտ, Շերամ, Հավասի… Հայ աշուղական երգերի մի գողտրիկ ընտրանի միշտ էլ նրա երգացանկի կորիզն էր կազմում՝ գումարած ժամանակակից երգահանների ստեղծագործությունները:

Իսկ երգի հետ մտերմացել է մանկուց. մորական պապի՝ Սարգսի գերդաստանը Արմավիրում հայտնի էր իր երաժշտասիրությամբ: Հայրը ջութակ էր նվագում, մայրն ու եղբայրը երգում էին, պապը Ջիվանու երգերի հանդեպ պաշտամունքի հասնող սեր էր տածում: Հայ տոհմիկ երգն է օրորել նրա մանկությունը, արյան հետ ներծծվել երակներում, դարձել նրա կոչումն ու կյանքի անդավաճան ուղեկիցը ու այսօր էլ նեցուկ է նրան: Երգարվեստի աշխարհում իր առաջին քայլերն սկսել է ինքնագործ խմբերից, ելույթներ ունեցել մշակույթի տներում և ռադիոյով: Պատանի երգչուհին քանիցս հաղթող է ճանաչվել հանրապետական մրցույթ-փառատոներում: Մինչև Արցախ հրավիրվելը ժողովրդական երգի փառատոներում նա մի քանի անգամ արժանացել է դափնեկրի կոչման, երեք անգամ պարգևատրվել Հայաստանի մշակույթի նախարարության պատվոգրերով:

Նա ձեռնունայն չէր եկել Ստեփանակերտ. թիկունքում Հոկտեմբերյանի մշակույթի շրջանային տան գեղարվեստական ղեկավարի աշխատանքային փորձն ու բեմական կյանքի մի հատվածն էր՝ անձնական կյանքի հաջողություններով, նաև կորուստներով… Ինչպես նշեցինք, տեղի հանդիսատեսը գնահատեց երիտասարդ երգչուհու տաղանդը: Եվ ոչ միայն հանդիսատեսը. բեմական արտաքինը, անկաշկանդ պահվածքը, հանդիսատեսի հետ շփման անմիջականությունը, հիանալի առոգանությունն ու հայերեն գրագետ խոսքը, գեղեցիկ ձայնը և պարելու ձիրքը գրավեցին Ստեփանակերտի դրամթատրոնի տնօրեն Միքայել Կորգանյանին, ով աշխատանքի հրավիրեց շնորհալի արտիստուհուն: Լիդա Վասիլյանը երանությամբ է հիշում այն տարիները և ասում, որ թատրոնն այն տարիներին մեղվափեթակ էր հիշեցնում, տարվա կտրվածքով 400-ից ավելի ներկայացումներ էին խաղում, երբեմն մի օրվա մեջ՝ 2-3 անգամ: Գոհ է թատերասեր ստեփանակերտցիներից, ոգևորությամբ է նշում, որ «Աղելաիդան՝ նորահարս» ներկայացումն իրենք արդեն 32-րդ անգամ էին խաղում, և երբ ինքն այդ օրը գալիս է թատրոն ու տեսնում տոմսարկղի առջև ձգվող հերթը, զարմանում է՝ մարդիկ քանիերորդ անգամ գալիս էին նայելու իրենց դուր եկած ներկայացումը: Շուրջ 30 դեր՝ դրամատիկական ներկայացումներում և երաժշտական կատակերգություններում, որոնք բարձր գնահատականի արժանացան ժամանակի մամուլում: Նրա բեմական ուղուն են անդրադարձել երաժշտագետ Սերգեյ Մարկոսյանը, կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանցը, գրող-բանահավաք Ռոբերտ Ղահրամանյանը և ուրիշներ: Սակայն նրա կոչումը հայ երգն էր, և 1975 թվականին նա նորից վերադարձավ անսամբլ ու նվիրվեց երգարվեստին: Տարիների հետ հղկվեց Լիդա Վասիլյանի բնատուր տաղանդը՝ միահյուսելով թատերական դերասանուհու և քնարական երգչուհու ձիրքը, առավել ցայտուն դարձնելով նրա բեմական հմայքն ու կատարման նրբությունը: Ժամանակին Ս. Մարկոսյանն է դիպուկ բնութագրել նրա արվեստի այս յուրահատկությունը. «Դրամատիկ դերասանուհու փորձը տալիս է իր հաճելի արդյունքը. Վասիլյանի կատարումը ձեռք է բերում կերպարային տեսանելի բովանդակություն»:

Իր արվեստով երգչուհին գերել է ոչ միայն արցախցի հանդիսատեսին. նախկին ԽՍՀՄ միութենական գրեթե բոլոր հանրապետություններում բազմաթիվ համերգային շրջագայություններից անջնջելի հուշեր են մնացել, որոնք այսօր էլ ջերմացնում են նրա հոգին: Ուրախությամբ պիտի նշենք, որ այսօր էլ երգն ապրում է նրա հետ, 80-ամյա երգչուհու գեղեցիկ ձայնը դեռ գերում ու հուզում է՝ հաճելի թրթիռներով պարուրում լսողին: Ու զարմացնում է ոչ միայն կատարման զգացմունքայնությամբ ու նրբությամբ, այլև շատ ճիշտ, գրագետ մատուցմամբ: Կարծում ենք, թեպետ ուշացումով, շատ մարդկային ու արդարացի կլիներ փոխադարձել Լիդա Վասիլյան երգչուհու և արտիստուհու վաստակը ուշադրությամբ ու մեծարանքով, քանզի ամբողջ կյանքում նա եղել է հայ երգի նվիրյալը, ջերմեռանդ պահապանն ու տարածողը:

**Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ**

ԵԶՐԱԳԻԾ

# ԱՄԱՆՈՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆ*



*Եթե մի օր լսեք, որ ես մահացել եմ, չհավատաք, կգնաք կշրջեք Արցախ աշխարհով մեկ և դուք ինձ կտեսնեք յուրաքանչյուր հայ մանկան սրտի զարկի մեջ, արցախցի գեղջուկի ցավի ու հույսի մեջ, հայ զինվորի համբերության ու հուսավառ հավատի մեջ, հայրենի հողիս տաք շնչի մեջ, Արցախի երկնակամարիս անմար գույների մեջ:*

### ՁՅՈՒՆԸ

Ձյունը, բալաս,
Ծով բարիք է
Եվ ծով տուրք է,
Եվ տալիք է:

Ասես թե նա
Ոչ թե ձյուն է,
Այլ լիառատ
Ցնծություն է:
Որքան շատ է
Ձյունը դաշտում,
Այնքան շատ է
Հացը տաշտում:

### ՀԱՆԴԵՐՈՒՄ

Տոնածառի
Հանդերում
Մեր սիրտը
Ի՞նչ է ուզում.-
Որ երգ խաղը
Լինի ծով,
Կյանքը անցնի
Զնգոցով:
Աղվեսը հավ
Չլափի,
Գայլը արյուն
Չթափի:
Շլդիկն ապրի
Միշտ անվախ,
Շունն ու կատուն
Է՛լ անվախ:
Ժիր աղավնին
Թևածի
Հանուն բարու
Ու հացի...
Կյանքին բերի
Խաղաղության
Նոր տարին:

### ՏՈՆԱՀԱՆԴԵՍ

Մենք ձմեռվա
Արևի տակ
Աշխատեցինք
Արագ-արագ:
Եվ շինեցինք
Մի ձնեմարդ,
Քիթը՝ գազար,
Այտերը՝ վարդ:
Ի՜նչ ձնեմարդ՝
Ձյունոտ տափին,
Մի իսկակա՜ն
Ձմեռ պապի...
Եղևնին էլ՝
Կողքին կանգնած,
Ձյունաճերմակ
Շորեր հագած:
Ամեն ինչ կար՝
Բարիք ու բար,
Միայն թե նոր
Տարին չկար:
Նոր տարին էլ
Թե հյուր գա մեզ՝
Կբացվի ճոխ
Տոնահանդես:

### ՓԱԹԻԼԻ ՈՒԺԸ

- Ո՞ւր ես գնում,
Փոքրիկ փաթիլ,-
Ամպիկն ասաց
Փաթիլին:
- Հյուր եմ գնում
Հող ու հանդին՝
Կյանք տամ ծաղկին
Ու ծիլին:
- Հողը՝ հսկա,
Հանդը՝ անծիր,
Իսկ դու հազիվ
Մի կաթիլ...
Դու կկորչես
Երկար ճամփին,
Փոքրիկ, անմիտ
Իմ փաթիլ:
- Իսկ ես, իսկ ես,
Իմ մայր ամպիկ
Տես՝ մենակ չեմ
Ու անզոր...
Ես իմ միլիոն
Ես իմ անթիվ
Եղբայրներով եմ
Հզոր:

### ՁՄՌԱՆ ՊԱՐ

Դրսում ձմեռ է,
Ցուրտ, սառնամանիք,
Ցուրտը սարքել է
Սառցե հարսանիք:

Ու նվագի տակ
Հանդում ու սարում
Պաղ փաթիլներն են
Խնդում ու պարում:

Հարսանքավորներ ենք
Դարձել մենք բակում
Է՛վ թռվռում ենք,
Է՛վ ճոխ աղմկում:

Մենք այնպես ենք շիկնել
Ալ խնձորի պես,
Որ ցուրտը դրսում
Նախանձում է մեզ:

# ՏԱՐԵԴԱՐՁԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ

Ներդպրոցական միջոցառումների շարքում կարելի է տեսնել բազմաբովանդակ աշխատանքներ, սակայն այս մեկը մեր դպրոցի կյանքում նոր էր իր մտահղացմամբ:

Առավոտից դպրոցում տոնական տրամադրություն էր: Այն ստեղծում էին ութերորդ դասարանցիներն իրենց պայծառ դեմքերով: Հասցրել էին երկրորդ հարկի ընդարձակ միջանցքը զարդարել, դիմացի պատը ծածկել էին մեկ տարվա ընթացքում լույս ընծայված «Շավիղ»-ներով:

Ահա հավաքված հանդիսականներին ողջունեցին հաղորդավարները՝ Մխիթարն ու Էմման՝ հայտարարելով մեկ տարեկան «Շավիղ»-ին նվիրված միջոցառման սկիզբը: Հնչեցին երգեր ու բանաստեղծություններ, հիշեցին, թե ինչպես ծնվեց թերթը, և թե որքան էին թերահավատ իրենց ուժերի նկատմամբ: Իսկ հիմա «մեծն» լրագրողներ են և ունեն տարեվերջյան անվանակարգեր՝ «Ամենափոքր թղթակից», «Ամենաակտիվ ընթերցող», «Թղթակից-ուսուցիչ», «Տարվա լավագույն հոդված» և այլն: Իրենց աջակցելու համար շնորհակալություն հայտնեցին դպրոցի տնօրեն Է. Ֆահրադյանին, փոխտնօրեն Ա. Նալբանդյանին, ավստրալացի հովանավորներին ու համակարգչային ձևավորողներ Լ. Գյոզալյանին և Դ. Եղիազարյանին:

Ուսուցչական կոլեկտիվը շնորհավորում է «Շավիղ»-ի գլխավոր խմբագիր, ութերորդ դասարանի ղեկավար Անահիտ Հարությունյանին՝ թերթի տարեդարձի կապակցությամբ և ցանկանում առողջություն, անհատնում եռանդ:

Ցանկալի կլիներ, որ թերթն ընդլայներ իր հետաքրքրությունների շրջանակը, ոչ միայն հանդես գար տեղեկատվական նյութերով, այլև կազմակերպեր զանազան թեմաների (որևէ գրական ստեղծագործության, կինոնկարի, համերգի կամ միջոցառման) քննարկումներ: Լիահույս ենք, որ թեկուզ դանդաղ քայլերով, բայց իրենք կդառնան շարժիչ ուժ, կզգան իրենց առաջընթացը և իսկապես կդառնան դպրոցի առաջամարտիկները:

**Սուսաննա ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**
**Շահումյանի շրջանի Քարվաճառի Վ.Սարոյանի անվան միջն. դպրոցի ուսուցչուհի**

# ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Մեր ամբողջ կյանքը անավարտ դաս է: Առաջին քայլերը դեպի մեծ կյանք՝ մեր պահվածքը, դրսևորումը՝ որպես անհատականություն, մենք կատարում ենք դպրոցի պատերի ներսում: Դրա համար անհրաժեշտ է հետևողական և համբերատար աշխատանք: Դպրոցը ժամանակակից քաղաքացուն պատրաստում է մշակութային մարտահրավերների: Լեզուների իմացությունը նրան դարձնում է ճկուն և բանիմաց, տալիս է ընտրության հնարավորություն, իսկ նոր տեխնոլոգիաների իմացությունը թույլ է տալիս անարգել մուտք գործել համաշխարհային ինֆորմացիոն տարածք:

Ժամանակակից մարդու մասնագիտական և անհատական զարգացումը չի կարելի պատկերացնել առանց գոնե մեկ օտար լեզվի իմացության: Օտար լեզուներ սովորելու ձիրքը և ցանկությունը կարևոր են, բայց նաև չպետք է մոռանալ, որ սովորեցնել օտար լեզու նույնպես պետք է անել սիրով և ուրախությամբ:

Օտար լեզուների ուսումնասիրությունը լայնացնում է մեր մտահորիզոնը, մարդիկ դառնում են ավելի կիրթ: Օտար լեզուն օգնում է իմանալ մայրենի լեզուն ավելի լավ: Ինչպես ասել է հանրահայտ Գյոթեն, «Ով չի իմանում օտար լեզուներ, չի իմանում ոչ մի բան իր մայրենի լեզվի մասին»:

Անգլերեն լեզուն այնքան կայուն է մեր կյանքում, որ մենք դադարել ենք այն նկատել, մինչդեռ շատ մասնագիտությունների և համակարգչային անվանումները կապված են անգլերեն լեզվի հետ: Ուրիշ լեզուները, որ այնքան էլ հաճախ չեն հանդիպում, նույնպես շատ կարևոր են և կարող են օգտակար լինել կյանքում:

Արդի ժամանակաշրջանը նոր տեխնոլոգիաների, բիզնեսի, միջազգային հարաբերությունների շրջան է, և օտար լեզվի իմացությունը պարզապես անհրաժեշտություն է: Դրա համար էլ երիտասարդությունը ձգտում է սովորել անգլերեն կամ որևէ այլ օտար լեզու: Շատ երկրներում, այդ թվում և մեր երկրում օտար լեզվի ուսուցումը պարտադիր առարկա է դպրոցներում: Անգամ մանկապարտեզներում փոքրիկները խաղի միջոցով սովորում են օտար լեզու:

Այն փաստը, որ շատերն ընտրում են օտար լեզուն որպես իրենց հոբբի, բացատրվում է նրանով, որ օտար լեզվի ուսումնասիրությունը օգտակար է ոչ միայն մասնագիտության, կրթության, հաղորդակցման մեջ, այլ նաև մարդու ուղեղի համար: Ինչքան շատ օտար լեզուներ ես ուսումնասիրում, այնքան հավանականությունը մեծ է, որ դու կապրես խորը ծերություն՝ պահպանելով ճկուն միտք և կայուն մտածողություն:

Այսպիսով, ինչ նպատակով էլ ուսումնասիրեք օտար լեզու, կարևոր է գիտակցել, որ դա աստիճանական բնույթ կրող գործընթաց է, որի շրջանակներում սխալներ կարելի է ակնկալել ուսուցման բոլոր մակարդակներում:

Իմանալ օտար լեզու՝ շատ անհրաժեշտ է այսօր ժամանակակից կրթված մարդու, յուրաքանչյուր լավ մասնագետի համար: Ուստի եկեք սովորենք օտար լեզու և բացահայտենք շատ հետաքրքիր բաներ մեր կյանքում:

**Անահիտ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**
**ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի օտար լեզվի մասնագետ**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայտարարվում է մրցույթ՝ ԼՂՀ Մարտունու շրջանի ներքոբերյալ գյուղերի դպրոցների ուսուցչի թափուր տեղերի համար*

Կաղարծիի մ/դ - մաթեմատիկա՝ 14 ժամ

Վազգենաշենի մ/դ - պատմություն՝ 6 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,

8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունվարի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան հունվարի 20-24-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

# *ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ «ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՆԴԵՍԻՆ*

Սկսված է «Մշակույթ» գրական-գեղարվեստական, մշակութային հանրամատչելի հանդեսի 2014թ. բաժանորդագրությունը: Նոր տարում զգալիորեն կմեծանա հանդեսի ծավալը, կբարելավվի հրատարակչական որակը: Հանդեսը կլինի նաև մեթոդական աշխատանքի կազմակերպման յուրատեսակ կենտրոն մշակույթի հիմնարկների և գեղարվեստական ինքնագործ կոլեկտիվների համար:

*Շտապեք բաժանորդագրվել:*
*Տարեկան բաժանորդագինն է՝*
*3500 դրամ:*

*Մեր հաշվեհամարն է՝ «Արցախբանկ» ՓԲԸ 22300102 086400*

*Մեր հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Թումանյան 63 (Մանկական գրադարան)*

*Գումարը փոխանցելիս նշեք նաև ձեր հասցեն:*

***«Զարթոնք» մշակութային կենտրոն***

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.12.2013թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: